

ՀԱՆԷ ՊՐՈԼԵՏ-ՏՈՒՐԻԶՄԻ ՅԵՎ ԵՔՍԿՈՒՐՄԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
(ՊՏԵԸ - ՕՊԵ)

---

*Handwritten scribbles and numbers, possibly "532"*

**ԱՐԱԳԱԾԻ ԱՍՏՂԱԶԵՎ  
Ա Ր Շ Ա Վ Ը**

1934 թ. ՈԳՈՍՏՈՍԻ 17—29

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԵՏՂՐԱՏ—1936

ՀԱՅԿԷՆ Գրական-տարիզմի յեզ ԵՖօհուրսիոն ԸՆԿԵՐԱՐՅՈՒՆ  
(ԳՅԵԸ-ՕՍԻՅ)

*Գրքից հարստացրած է*


*1936 թ. 12/11*

*Ը. Կարսաճյան*

**Ա.Ր.Ա.Գ.Ա.ԾԻ Ա.ՍՏՂ.Ա.ԶԵՎ,  
Ա.ՐՇԱՎԸ**

1934 թ. ՈԳՌՍՏՈՍԻ 17-22

ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԳՅՏԱԿԱՆ ՀՐԾ.ՑԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՄԲԵԿԱՆ

1936

*8997  
4187*

Մտնակցում են՝

ԿՈՐԿՈՏՅԱՆ Զ., ԴՆՐՅԱՆ Վ., ՍԱՐՅԱՆ Գ.

Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան  
Լեզվ. խմբագիր՝ Հ. Պետրոսյան  
Սրբ. Ա. Արզաթանյան

Հրատ. 3501, Գլխավոր լիազ. 252, Պատվեր. 1209, Տիրաժ 1000

Հանձնված և արտադրության 1935 թ. 25 հոկտեմբերի

Ստորագրված և ապելու 1936 թ. 3 փետրվարի

Պետհրատի տպարան, Յերեվան, II Կնուռնի, № 4

ՊՐՈԼԵՏ-ՏՈՒՐԻՋՄԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

(17 ոգոստոսի 1934 թ.)

Տուրիստներին բարձր լեռնային դժվարությունները հաղթահարելուն մարզեցնելու, ալպինիզմի նորմաներ տալու, մարտական ունակություն զարգացնելու, ինչպես նաև Արագածի մարշրուտները ճշտիվ վորոշելու, աշխարհագրական տեղանուններն ստուգելու և անվանակոչելու, արշավին մասնակցող մասնագետներին գիտահետազոտական գծով (հանքաջուր, հանքային տեսակներ, բույսեր, կուլտուրայի պատմության հիշատակարաններ և այլն) վորոնումներին հնարավորություն տալու համար Պրոլետարիզմի Հանրապետ. Խորհուրդը վորոշեց.

1. Կազմակերպել աստղաձև արշավ Արագած լեռան վրա հինգ գծով՝ Յերևանից յերկու գծով (Ապարանի և Ղաղնաֆարի վրայով), Վաղպատից, Լենինականից, Կիրովականից:

2. Մեկնում նշանակել 17—ի ոգոստոսի յերեկոյան

4. Յերևանից Ապարանի գծով մեկնող խմբի ղեկավար նշանակել ընկ. Ասատուր Ասատրյանին, առաջադրելով բարձրանալ ամենաբարձր գագաթը (4096 մ.):

5. Յերևանից Ղազնաֆարի գծով մեկնող խմբի գեկավար նշանակել ընկ. Զավեն Կորկոտյանին, իսկ կուրտուրայի պատմության գծով խորհրդատու՝ պրոֆ. Աշխարհբեկ Քալանթարյանին, առաջադրել՝ բարձրանալ խառնարան, կատարել Արագածի աշխարհագրական անունների ճշտորոշում, հնարավորություն տալ խմբի մասնակցողներին, չուրաքանչյուրին ըստ յուր մասնագիտության, գիտական հետախուզումներ կատարելու:

6. Վաղպատից Բյուրականի գծով մեկնող խմբի գեկավար նշանակել ընկ. Վաղարշակ Բուզադյանին, առաջադրել՝ բարձրանալ յերրորդ գագաթ, նյութեր հավաքել Հայաստանի աշխարհագրութան զաստվանդման համար:

7. Լենինականից Արթիկի գծով մեկնող խմբի գեկավար նշանակել ընկ. Աբարատին՝ առաջադրելով բարձրանալ յերկրորդ գագաթը:

8. Կիրովականից Արթիկի գծով մեկնող խմբի գեկավար նշանակել ընկ. Սուրեն Հովհաննիսյանին, առաջադրելով բարձրանալ Արագածի յերկրորդ գագաթը, կատարել մարտական առաջադրանքներ:

9. Բոլոր խմբերին՝ ամսի 19—ի յերեկոյան հանգիպել խառնարանում:

10. Հանդիպումից հետո Յերևանի խմբերն իջնում են Արթիկի վրայով, Լենինականի և Կիրովականի խմբերի մի մասը՝ Ղազնաֆարի, իսկ մյուս մասը՝ Բյուրականի վրայով, Վաղպատի խումբը՝ Ղազնաֆարի վրայով:

ՊՐՈՒԼԵՏ-ՏՈՒՐԻԶՄԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՒԱՀ՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ  
(1934 թ. 17 ոգոստոսի)

Յերևան:

Ք Ա Ղ Վ Ա Մ Ք

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ ԼԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԵՒՍՏԻ №26/67 ԱԲ-  
ՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ, 17—ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1934 թ.

Լսեցին.—

6. Պրոլետ-տուրիզմի Հանրապետական Խորհրդի միջնորդությունը՝ 1934 թ. ոգոստոսի 17—ին կազմակերպված Արագածի լեռնային արշավի կապակցությամբ անանուն օրյեկտների անվանակոչման մասին:

(Պրոլետ-տուրիզմի Հան.Խորհրդի նախագահության 1934 թ. սեպտեմբերի 9—ի նիստի №—2 արձ. կետ 18—րդ վորդումը) (գործ №5341): Զեկ.ընկ. Ռ. Դաշտոյան:

Վորոցեցին.—

6. Նկատի ունենալով Արագածի շուրջն ստեղծված խոշոր հեռաքրքրությունը և յեղնելով հեռագայում կազմակերպվելիք արշավների հաջողությունն ապահովելու անհրաժեշտությունից, Պրոլետ—տուրիզմի Հանրապետական Խորհրդի միջնորդությունը հարգել և կատարել հետևյալ անանուն օրյեկտների անվանակոչումը.

1. Արագածի գլխավոր խառնարանից դեպի Ղաղնաֆար ձորը (Գեղհովիտ) հոսող 3 ջրվեժներն անվանակոչել

- ա) Վերին
- բ) Միջին
- գ) Ներքին

2. Հյուսիսային գագաթից հոսող (Քաղցր ջրի հովտում) ջրվեժն անվանակոչել Տուրիզմի անունով:

3. Արագածի 5-րդ ամենափոքր գագաթի ներքև յեղած 10 լճակների (2 մեծ և 8 փոքր) հովիտն անվանակոչել Լճակների հովիտ:

4. Շիրազալայի և Ղազնաֆարի մեջտեղ գտնված Լուսադրյուրի մոտիկ բերդն անվանակոչել Լուսաբերդ:

5. Ղազնաֆարի հանդիպակաց բարձրունքների վրա գտնվող անանուն լիճը, վորին տեղացիները կոչում են լճում խեղդված Ամրոյի անունով, ընդառաջելով ԽՍՀՄ-ի Ակադեմիայի բրիգադի ցանկության անվանակոչել «Լեսսինգ» լիճ:

6. Ղազնաֆարի կամ Դալլիչայի հովիտն անվանակոչել համաձայն Շոպենի հիշատակության Գեղհովիտ:

7. Տուրիզմի ջրվեժի հովիտն անվանել Քաղցր ջրի հովիտ (նկատի ունենալով այն, վոր տեղացիները հասող ջուրն անգանում են Քաղցր ջուր):

## ՔԱՂՎԱԾՔ

ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՔՍՊԵՆԻՏԻՈՆ  
ԿՈՄԻՏԵՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ 1934 Ք. ՆՈՅԵՄԲԵՐԻ 3

1. Լսեցին. — Ընկ. Զ. Կորկոտյանի գեկուցումն  
Արագածում գտած նշանագրերի մասին:

2. Վոռոեցիցին. — 1. Արձանագրել, Վոռ / Ընկ. Զ.  
Կորկոտյանի գտած նշանագրերը պատկանում ե չա-  
յատանի այլ վայրերում և Արագածի մյուս մասերում  
հայտնաբերված այժազրերի խմբին և ունին կարևոր  
պատմահնագիտական նշանակութուն:

2. Գտնված հուշարձանների աեզիտորացիայի,  
լուսանկարահանման համար, ինչպես նաև նույն վայ-  
րում լայն հնագիտական հետախուզութուն կատարելու  
նպատակով ինստիտուտի առաջիկա 1935 թ. եքս-  
պեդիցիաների պլանի մեջ մտցնել հատուկ գիտական  
արշավ Ընկ. Զ. Կորկոտյանի մասնակցությամբ:

3. Ինստիտուտի 1935 թ. հրատարակության պլանի  
մեջ մտցնել ըրոբ մինչև այժմ հավաքված այժազրերի  
և այլ ժայռագրությունների հրատարակության գործը:

4. Կոմիտեյի և պատմական հուշարձանների պահ-  
պանության բաժնի կողմից հատուկ շնորհակալութուն  
հայտնել Ընկ. Չավեն Կարկոսյանին և Պրոլետ-տուրիզմի  
Հանրապետական Մորհրդին՝ կատարած աշխատանքների  
համար, միաժամանակ խնդրել Պրոլետ-տուրիզմի Հան-  
րապետական Մորհրդին եքսկուրսիաներ կազմակեր-  
պելիս տուրիստներին ուղադրությունը հրավիրել շրջա-  
գայություններին ժամանակ հնագիտական արժեք ունե-  
ցող հուշարձանների հայտնաբերման և յեղած հուշար-  
ձանների պահպանությանն ոժանդակելու գործի վրա:

Նախագահ՝ ԹՈՒՄՅԱՆ

Քարտուղար՝ ԱՒՐԱՀԱՄՅԱՆ

ԱՐԱԳԱԾԻ ԱՍՏՂԱԶԵՎ, ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԸ  
ՅԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԵՏԱԳԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արագածը—Խորհրդային Հայաստանի ամենարարձր լեռը, վորն իշխում է մնացած բոլոր բարձրությունների վրա, հարուստ է վոչ միայն լեռնային տեսակներով, հանքային նյութերով, այլ և ճոխ բուսականությամբ, բազմապիսի ծաղիկներով և բնության լեռնային անզուգական գեղեցկությունով:

Գլխավոր խառնարանից սկսվող հավիտենական ձյունաշերտերը, ինչպես նաև ալպյան բարձրությունների վրա գտնվող բազմաթիվ խոշոր ու փոքր լճերն ու լճակները, բազմերանգ ծաղիկներով ու հարուստ բուսականությամբ՝ կազմում են մի ընդհանուր լեռնային ներդաշնակութուն:

Հսկայական բարձրություններից գեպի ներքև հոսող գետերն ու գետակները, բազմաթիվ ջինջ ու վճիտ կարկաչուն աղբյուրներով՝ Արա-

գաժը դարձնում են վորպես այլիական աննը-  
ման գեղեցկութիւնն ունեցող մի լեռ:

Իգուր չե, վոր դեռ շատ հին ժամանակնե-  
րից մինչև այսօր Արագածը դարձել է ժողո-  
վրդական գովերգության ու փայփայանքի ա-  
ռարկան: Հարյուրավոր լեռգեր են հյուսվել՝ Արա-  
գածին նվիրված:

Արագածը, վորպես տուրխատական լեռնա-  
լին որչեկտ, վոչ միայն Հայաստանյան, այլ և Ան-  
դրրկովկասյան ու Միութենական լավագույն  
այլյան գեղեցկութիւնն՝ ունի իր պատվավոր  
տեղը:

Մենք դեռ չենք խոսում, վոր Արագածը  
խոշոր հետաքրքրութիւնն է ներկայացնում նաև  
վորպես պատմական անցյալ կուլտուրայի հա-  
րուստ բազա, հանքային, բուսական—կենդանա-  
կան աշխարհի՝ դեռևս վոչ լրիվ ուսումնասիր-  
ված որչեկտներից մեկն է հանդիսանում:

Հայաստանը, վորպես առավելապես լեռնա-  
լին լեռկիր, հրամայական պահանջ է դնում  
մեր առաջ ավելի քան լուրջ ուշադրութիւն  
դարձնել լեռնային տուրիզմի զարգացմանը,  
վորը վոչ միայն անհրաժեշտ է բնության պար-  
գեաժ լեռնային չնաշխարհիկ գեղեցկութիւնները  
վայելելու, հոգեպես թարմանալու տեսակետից,  
այլ և սոցիալիստական մեր լեռկրի ինքնապաշտ-

պանութեան կարևոր գործն ամուր հիմքերի վրա  
գնելու տեսակետից:

Անցյալում տեղի ունեցած մի շարք պատե-  
րազմերը չեկել են ապացուցելու, վոր առանձ-  
նապես լեռնային պայմաններում տեղի ունեցող  
մարտերի հաղթանակը կախված է այն բանից, թե  
նվ ե ավելի լավ տիրապետում լեռնային  
վերելքի և վայրեջքի տեխնիկային, և ինչ չա-  
փով նա ծանոթ է լեռնային ճանապարհներին:

Իգուր չե, վոր հուճեգարական ռազմագետ  
Չանտը գտնում է, թե՝ «1919 թվի ձմռանը կար-  
պատներում տեղի ունեցած կովում ռուսական  
գործերը խաչատառակ կերպով ջախջախվեցին  
այն պատճառով, վոր նրանք ծանոթ չեյին լեռ-  
նային տուրիզմին», հետևաբար նաև լեռնային  
ճանապարհներին, պայմաններին և նրա առանձ-  
նահատկութուններին:

Լեռնային տուրիզմի զարգացումով միայն  
հնարավոր է տիրապետել լեռնային ռազմական  
տակտիկային:

Այս տեսակետից չեղնելով, առանձնապես  
պետք է նշել, վոր ներկայումս Հայաստանի Պրո-  
լետ—տուրիզմի կարևոր և անհետաձգելի խըն-  
դիրներից մեկն է հանդիսանում լեռնային տու-  
րիզմի զարգացումը, վորպեսզի այժմյանից խիչ  
հնարավոր լինի մեր աշխատավորութեանը ծանո-

Թացնել լեռնային տուրիզմի տեխնիկային և ըստեղծել տոկուն, ճարպիկ, աննկուն ու հեշտությամբ բնության արհավիրքները հաղթահարող տուրիստների հզոր բանակ:

Ահա թե ինչն է խոշոր նշանակություն ունեցող 1934 թ. ոգոստոսի 17-ի Պրոլետ—տուրիզմի Խորհրդի կողմից նախապատրաստված Արագածի մասսայական աստղածեղ արշավի կազմակերպումը:

Խնդիրը լուրջ էր և բարդ. անհրաժեշտ էր բոցի ֆինանսական միջոցների ապահովումից՝ նաև արշավն ապահովել լեռնային զժվարին պայմանները հաղթահարող լավագույն տուրիստներով: Արշավը պետք է կատարվեր միաժամանակ հինգ կողմից—առաջին խումբը՝ Յերևան—Ապարան գյուղի վրայով—հյուսիսային (առաջին) ամենաբարձր գագաթը, 2—րդ խումբը—Ղազնաֆարի վրայով՝ Արագածի 4—րդ գագաթը: Վաղարշապատի (3—րդ) խումբը պետք է բարձրանար Բյուրական—Ամբերդի գծով 3—րդ գագաթը: Կիրովականի և Լենինականի խումբերին մարշրուտ էր տրված Արթիկի և Մանթաշի ձորի վրայով—նվաճելու Արագածի 2—րդ և 3—րդ գագաթները:

1934 թ. ոգոստոսի 17—ին արդեն կազմ ու պատրաստ էր արշավախումբը՝ նշված 5 մարշ-

ըուտներով. արշավին մասնակցում ելին 122  
տուրիստ: Նշանակված ելին ղեկավարները և  
պատրաստ եր ամեն ինչ:

Պակաս կարևոր խնդիր չեր նաև 122 հոգու  
5 որ տևող լեռնային արշավի շրջանում սնունդ  
գով ապահովելու, ինչպես նաև փոխադրական  
գործի կազմակերպման կարևոր կողմը: Ինչպես  
արշավից հետո պարզվեց՝ սննդի ընտրութունը,  
փորքան հնարավոր է նաև խոշոր ծանրութուն  
վերցնելուց խուսափելը, կարևոր և վճռական  
նշանակութուն ունեն լեռնային արշավների  
հաջող կազմակերպման գործում:

Զնայած արշավը կազմակերպված եր այն-  
պես, վոր բոլոր կողմերից բարձրացող արշավա-  
խմբերն ոգոստոսի 19 ի գիշերը պետք է հան-  
դիպելին իրար Արագածի խառնարանում, սա-  
կայն այդ հնարավոր չեղավ հետևյալ պատճառ-  
ներով:

1. Ապարանի ուղղությամբ մեկնող արշա-  
վախումբը, վորը չեր նախատեսել այդ գծով Ա-  
րագածի ամենաբարձր գագաթը բարձրանալու  
դժվարութունը, ընկավ վերին աստիճանի զրժ-  
վարին քարքարուտների մեջ և իզուր կտրեց  
հսկայական լեռնային տարածութուն:

2. Ոգոստոսի 18—ի գիշերը ժամեր տևող  
Արագածի հորդ անձրևներն ու կլիմայական

աննպաստ պարևանները վճռական զեր խաղացի՛ն  
ծրագրի վորոշ ժամկետայի՛ն խախտման և իրաբ  
հանդիպելու գործում:

3. Ծրագրված եր Արագածի աստղաձև տու-  
րխտական արշավի կինո—խրոնիկան տալ վոր-  
քան հնարավոր ե ամբողջական, սակայն նշված  
պատճառների հետևանքով հնարավոր չեղավ լրիվ  
չափով ապահովել առաջադրված խնդիրը:

Չնայած նշված թերություններին՝ այնու-  
ամենայնիվ Արագածի առաջին կազմակերպված  
լեռնային մեծ արշավը լավագույն քննությունը  
հանդիսացավ պրոլետարական տուրխտական  
կազմակերպությունների համար:

Չպետք ե մոռանալ նշելու տուրխտական  
կարգապահության և դժվարությունների հաղ-  
թահարման հատուկ այն տոկոսնությունը, վորը  
հանդես չեկավ Արագածի մասսայական արշավի  
ընթացքում:

Առանձնապես պետք ե նշել Արագածի  
հյուսիսային ամենաբարձր գագաթը (4096 մ.)  
նվաճող արշավախմբի հերոսամարտը՝ լեռնային  
դժվարություններին և բնության արհավիրքնե-  
րին հաղթահարելու, ինչպես նաև ընտրված սը-  
խալ մարշրուտից դուրս գալու համար:

Կիրովականից և Լենինականից արշավախում-  
բին մասնակցող կարմիր բանակային շոկատ-

ները փայլուն կերպով կարողացան լուսարձակի միջոցով Արագածի բարձրություններէից գիշերը կապ պահել Լենինականի զորամասերի հետ և հազորդել տեղեկություններ իրենց արշավից:

Արագածի արշավին մասնակցող Ղազնաֆարի խումբը, ընկ. Զավեն Կորկոտյանի ղեկավարութեամբ, կարողացավ հայտնաբերել այժմգրերի հնագույն տեսակներ, վորոնք խոշոր գիտական նշանակութիւն ունեն անցյալի կուլտուրայի ուսումնասիրութեան տեսակետից:

Յեւ վերջապես արշավախմբին մասնակցող 122 տուրխատները, բացի լեռնային տուրիզմի ասպարեզում լավագույն քննութիւն տալուց, մոտիկից ծանոթացան Արագածի լեռնային կազմութեան, բուսական ու կենդանական աշխարհին, ջրաբաշխական սխտեմին և անցյալի կուլտուրական արժեքներին:

Արագածի աստղաձև արշավի ընթացքում, բացի լավագույն առանձին տեսարանների նկարահանումից, խոշոր հետաքրքրութիւն առաջացրեց Արագածի տուրխատական արշավի կինո—խրոնիկայի ցուցադրումը Յերիանում, Հայաստանի մշուս քաղաքներում, նաև Միութեան քաղաքներում:

Արագածի աստղաձև արշավի շնորհիվ հնարավոր լեղամի ճշտել և վորոշել տուրխատական

մի շարք կարևոր որբեկտներ, վորոնք հետագայում Պրոյետ—տուրիզմի Հանրապետական Խորհրդի միջնորդութեամբ անվանակոչվեցին ՀՄԽԿԵՆտգործկոմի սույն թվի հոկտեմբերի 17—ի հատուկ վորոշումով:

Արագածի աստղաձև արշավի միջոցով ճըշտվեց Արագածի մարշրուտների մեծ մասը և մասնավորաբար Արագածի ամենաբարձր գագաթի մարշրուտը:

Վերջապես Արագածի այս սուաջին կազմակերպված արշավը հիմք է դնում հետագայում ավելի կազմակերպված գիտա—հետազոտական լուրջ արշավների կազմակերպման, վոչ միայն դեպի Արագած, այլ և Հայաստանի այլ կարևոր բարձրութունները, —մի բան, վորն այնքան կարևոր է մեր սոցիալիստական յերկրի լեռնային տուրիզմի հետագա զարգացման, ինչպես նաև հետագայում այս բնագավառում նորանոր նվաճումներ ձեռք բերելու համար:

ԱՐԱԳԱՆԻ ԱՍՏՂԱԶԵՎ, ԱՐՇԱՎԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1934 թվի ոգոստոսի 17—22 ՀՍԽՀ Պրոլետ-տու-րիզմի Ընկերութունը կազմակերպեց արշավ Արագածի վրա, վորը տևեց 5 որ:

Պրոլետ-տուրիզմի Հանրապետական Խորհրդի առաջադրանքը կատարվեց գերակատարու-մով. նշենք 5—րդ գագաթի բարձրացումը, չեր-կու խմբերի միաժամանակ ա. գագաթ բար-ձրանալը, այժազրերի գլուտը: Թերակատա-րումներից հիշենք այն վոր, խմբերն Արագածի խառնարանում իրար չեն հանդիպել և մարշրու-տը մեկ որով չերկարաձգվել է (4 որվա փոխա-րեն՝ 5 որ): Թերակատարման հիմնական պատ-ճառները՝ հորդառատ անձրև, ավտո-տրանսպոր-տի վատ սպասարկումը և այլն:

Ճանապարհին Վաղպատի խումբը փոխա-նակ Բյուրականից սկսելու, սկսեց Ղազնաֆարից և վերջացրեց Բյուրականով:

Այստեղ ուզում ենք տալ աստղաձև ար-շավի ձեռք բերած արդյունքների ամփոփումն. առանց մանրամասնութունների մեջ մտնելու:

1. Արագածի բոլոր գագաթները նվաճված են. Արագածի 1—ին՝ ամենաբարձր գագաթը բարձրացան լերկու խումբ, 16 հոգով. ա. խումբը՝ ընկ. Ա. Ասատրյանի խմբից 8 հոգի, վորը և գագաթի վրա խփեց Պրոլետ-տուրիզմի դրոշակը, իսկ բ. խումբը՝ 2. Կորկոտյանի խմբից մի բրիգադ ընկ. Գրիգոր Դարբինյանի առաջնորդութիւնով 8 հոգուց բաղկացած:

Արագածի 2—րդ գագաթը (4081 մ.) բարձրացան Լենինականից և Կիրովականից լեկոդ խմբերը՝ 60—ից ավելի մասնակիցներով:

Արագածի 3—րդ գագաթը (3916 մ.) բարձրացան Յերևանի, Վաղպատի, Լենինականի և Կիրովականի խմբերի առանձին բրիգադները:

Արագածի 4—րդ գագաթը (3879 մ.) վոչ վոք չբարձրացավ: Այդ գագաթը բարձրացել էին 36 հոգի, լերեք տարի առաջ:

Արագածի 5—րդ գագաթը (մոտ 3700 մ.) բարձրացան 31 ընկերներ. պետք է նշել, վոր այս գագաթը քարտեզների վրա նշանակված չէ, ինչպես վոր զարմանքով դիտել է տալիս նաև ԽՍՀՄ-ի Գիտութիւնների Ակադեմիայի բրիգադը:

Արագածի ա. բ. գ. գագաթները զրեթե սրածալը են:

Դ. գագաթը, վորտեղ բարձրանալն ամենադժվարն է համարվում, վորոք տաշված հար-

Թափաչրի տպավորութիւնն ե թողնում ե տեղացիների կողմից կոչվում ե Լուսավորչի կալատեղ (համեմատութիւնն Լուսավորչի կանթեղի առասպելի հետ): Գազաթը բաղկացած ե ժայռային տեսակի տափակ մեծ քարերից, առանց կտորտանքների, մի կողմի վրա քիչ բարձր, իսկ մյուս կողմի վրա՝ տափարակ ճանապարհ 5—6 մետր չերկարութեամբ ու 1—2 մետր լայնութեամբ: Այս ե, վոր կալատեղ ե կոչվում: Կարելի չե չենթադրել, վոր հին ժամանակներն այստեղ թերիս արևի կամ աստծո պաշտամունքի տեղ ե լեղել:

Ե. գազաթ բարձրանալը կատարվում ե սանդխաձև փոքրիկ տափարակներով՝ սառցադաշտային հետքերով: Ամենավերևը կտորտված տափակ սալաքարերի կույտ ե, զրեթե քառանկյունի չերկար սեղանի ձևով, մոտ 10 մետր չերկարութեամբ ե չերեք մետր լայնութեամբ տափարակ ե: Տափարակի մի կողմում չերեք քարաշար կա, ամեն մեկը կես քառակուսի մետր տրամագծով ե 1—2 մետր բարձրութեամբ, մարդկանց ձեռքով են շինված:

Արագածի 4 հիմնական ե մեկ չերկրորդական գազաթները դեռևս չեն անվանակոչված, ե այդ պատճառով վորոշ շփոթութեան ե առաջանում:

2. Արագածի սեղագրական անունների նեզր-  
սումը. Ղազնաֆարից մեկնող խումբը ճշտեց մի  
շարք տեղադրական անուններ, վորոնք և հետա-  
գալում Պրոլետ-տուրիզմի Հանրապետական Խոր-  
հրդի առաջադրանքով պաշտոնապես առաջադր-  
վեցին ՀՍԽՀ Կենտրոնականին և վերջինիս կողմից  
հաստատվեց 1934 թ. հոկտեմբերի 17-ի № 26/27  
վորոշումով:

1. Լեասինգ լիճ. — Ակադեմիկոս Լեվինսոն  
Լեասինգի անունով: Գտնվում է Ղազնաֆար և  
Թաքառլու գյուղերի մեջտեղով դեպի վեր, մոտ  
3200 մետր բարձրության վրա: Իր մեծությամբ  
և ջրի պաշարով մրցում է Սև և Բագու լճերի  
հետ: Տեղացիները կոչում են Ամրոյի լիճ — Ամ-  
րո անունով գյուղացու այնտեղ խեղդվելու պատ-  
ճառով: Արագածի վերաբերյալ քարտեզներում և  
գրքերում տարորինակորեն այս լիճը չի հիշատակ-  
վում, կամ թողնված է առանց անվանակոչման:

2. Գեղհովիտ. — Ղազնաֆարից մինչև  
խառնարան բարձրացող ձորը և վտակը տեղա-  
ցիները կոչում են Ղազնաֆար գյուղի անունով,  
խկ քարտեզի վրա նշանակված է Դալիչայ:  
Գիտությունների Ակադեմիայի Արագածն ուսում-  
նասիրող բրիգադն իրավամբ նշում է, վոր վոչ-  
վոք այդ տեղին Դալիչայ չի ասում: Շուկենի  
մոտ այդ ձորն ու վտակը կոչվել են Գեղհովիտ

(гериовит) և այդ անունն այժմ վերակենդանացվում է:

3. Լճակների հովիտ. — Լեսսինգ լճի և 5-րդ գագաթի մեջտեղում կա փոքրիկ անառնուն հովիտ, վորտեղ կարելի չէ մինչև 10 լճակ համբել, վորոնցից չերկուսը բավականին խոշոր են:

4. Քաղցր ջրի հովիտ. 5-րդ, 4-րդ և ամենաբարձր գագաթի մեջտեղում կա ձորահովիտ, վորի միջից հոսում է փոքրիկ վտակը: Տեղացիներն այդ ջուրը նույնպես անվանում են Քաղցր ջուր, տարբերելով ժանգոտ (չերկաթահամ) ջրից, վորն իջնում է մյուս հովտից:

5. Տուրխատ ջրվեժ. — Արագածի ամենաբարձր գագաթից սկիզբ է առնում Քաղցր ջրի վտակը, վորը, նույնանուն հովտի վերնամասում ունի հիասքանչ գեղեցիկ ջրվեժ:

6. Լուսաբերդ. — Նախաուրարտական բերդ, վորը գտնվում է Ղազնաֆար և Շիրազալա գյուղերի միջև, Լուսաղբյուրի (թուրքերեն անվանում են Սաչաբուլաղ) վերև:

Պետք է դիտել, վոր Կենտգործկոմի վորոշման մեջ չի մտել Արագածի ամենամեծ և իրար հաջորդող լեռեք մեծ ջրվեժների անվանակոչությունը. այդ լեռեքը միասին ունեն 150 մետր բարձրություն, պահվում է ժանգոտ ջրի հովիտ անունը, ինչպես տեղացիներն են ասում:

### 3. Արագածն առողջավայր ե—սերեկուր.

Մեր տուրիստական արշավն ապացուցեց, վոր Արագածը հրաշալի առողջավայր ե, և շատ իրավացի լե ժողովրդական լերգը, վոր նշում ե «Ալագյազը բարձր սար ա, ջուրը հիվանդին դեղ ա»: Բիոլոգ պրոֆ. Բունակն Արագածի խաշնարածների մոտ սննդի կալորիականութունն ուսումնասիրելուց հետո տողերիս գրողին հայտարարել եր. «Արագածն ստիպում ե կալորականության թեորիան հիմնովին փոխել»: 1934 թվին Սլբրուս բարձրացող կարմիր բանակայինները բոլորն ել առանց բացառության տվել են 2 կիլոից վոչ սպասս քաշի ավելացում: Մեր խումբն ել Յերևանի համեմատությամբ հազիվ մեկ չորրորդ քանակությամբ սնունդ ստանալով, անձրևի տակ և ձյան միջով ժամերով քայլելուց հետո ուժասպառության վոչ մի դեպք չունեցավ, բոլոր մասնակիցները (շատերը միայն առաջին անգամն ելին լեռ բարձրանում և բարձրացողներից չորսը կին ելին) առաջին որվա անվարժությունից և հսկա բարձրությունների վերելքներից հետո վոչ մի արտակարգ հոգնածություն, կամ ուժասպառություն չզգացին:

Այդ տեսակետից ել Արագածը բոլորիս կարծիքով ամենահրաշալի տերենկուրի (բացությա պտուղտների միջոցով բուժվելու) վայր ե:

4. Արագածն ամենաւանչելի զբոսավայր-  
Ամբողջ աշխարհում շատ քիչ լեռներ կան, վո-  
րոնց վրա կարելի չե շատ հեշտությամբ և հա-  
ճուլքով բարձրանալ, առանց լեռ բարձրանալու  
հատուկ դժվարությունների և վորոնց վրայից  
հնարավոր ե ամեն ուղղությամբ աչքապարուր  
տեսարաններ ունենալ՝ խմել պաղ ջրեր, շնչել  
լեռնային մաքուր ոդ և շուրջդ ամեն տեղ ծա-  
ղիկներ տեսնել: Ամբողջ ճանապարհը մինչև  
լեռնագագաթները ծածկված են ալպյան արոտ-  
ներիով ու ծաղիկներով:

Թող գարմանալի չթվա, վոր 5 – րդ գագա-  
թի վրա (մոտ 3700 մետր) մենք դտանք մի  
քանի հատ ծաղիկ՝ սալաքարերի ձերպերից դուրս  
թուած:

Լեսսինգ, Բագու և Սև լճերի տեսարանները,  
Լճակների հովիտը, 150 մետրից ներքև թափվող  
Արագածի մեծ ջրվեժը, վորի աղմուկը մի քանի  
կիլոմետր հեռվից լսվում ե, Քաղցր Ջրի հովի-  
տըն իր Տուրխատ ջրվեժով, Ամբերդի, 12 պան-  
տերը և կուլտուրայի պատմության բազմաթիվ  
հիշատակարաններն Արագածը դարձնում են յե-  
զակի պտուղաի վայր տուրխատների համար:

Ապագայում չեթե դեպի Արագած Ֆուենիկուլ-  
տը շինվի, կամ ավտոն սուրա դեպի Արագածի լճե-  
րը, Արագածը մասսայական զբոսավայր կդառնա:

5. Արագածի ամենաբարձր գագաթի հանապարհը (4096 մետր). Ճանապարհի ստուգումը ցույց տվեց, վոր Ձինգիլ սարի արևելյան կողմից հնարավոր չե բարձրանալ: Ամենակարճ ճանապարհը մնում ե Ղազնաֆար գյուղից Գեղհովիտ ձորով, Քաղցր ջրի հովիտ, Տուրիստ ջրվեժ և այնտեղից 4 – ըզ գագաթի և ամենաբարձր գագաթի մեջտեղով վեր բարձրանալ: Այդ տեսակետից մնում ե հետագայում պարզելու, թե Հաջիխալի և Քոռբուլաղ գյուղերի վրայով բարձրանալն արդյոք ավելի ձեռնտու չե՞ քան թե Ղազնաֆարից բարձրանալը: Ամենաբարձր գագաթը բարձրացան թե Ղազնաֆարից մեկնող խմբի մեկ մասը (8 հոգի) և թե Ապարանից բարձրացող խումբը (8 հոգի), ընդամենը 16 հոգի:

6. Արագածի հանգեերը յեվ հանգացրերը. Բացի Արագածի փեշերի վրա գտնվող հարուստ հանածոներից (պեմզա, տուֆ, որսիդիան և այլն) Արագածի խառնարանի շրջապատում և խառնարանի մեջ կա ծծումբ, նաշադիր (ժանաքուր) և այլն, Շիրաղալայում՝ քարածուխ:

Սառնարանի կողերից (գ. գագաթի կողմից) բղխում են յերկաթաջուր և այլ հանքաջրեր:

Մեծ ջրվեժից քիչ հերքե կա նույնպես յերկաթաջուր, վորը կոչվում ե Փանգոտ ջուր՝ի տարբերութունն Քաղցր ջրի վտակի: Փանգոտ

Չուրը և խառնարանից իջնող Չուրը ատորժա-  
համ չեն, իսկ վերջինը նույնիսկ չի կարելի խմել:

7. Լուսարձակ. Արթիկից բարձրացող խում-  
բին հաջողվեց գիշեր ժամանակ լուսարձակի մի-  
ջոցով Արագածի գագաթից Լենինական քաղաքի  
հետ լուսարձակային խոսակցութուն ունենալ:

8. Վիճապների բլուր (ղզղիարեթ). Զիա-  
րեթ—նշանակում է ուխտավայր: Արթիկից բարձ-  
րացող խումբն այցելել է այդ սարը, վորի  
վրա գտնվում է հին հեթանոսական պաշտամունքի  
առարկայական փաստը՝ վիշապը:

9. Փաշիկ ֆարանձավ. Արթիկի և Ղփչաղի  
միջև մեծ քարայր, վորտեղ կարող է տեղավոր-  
վել 2000 մարդ: Քարայրը կոչվում է Փաշիկ  
(Արթիկից բարձրացող խմբի աշխատանքը):

10. Նախաուրարսական ֆաղափներ. Նախա-  
ուրարտական շրջանից մնացած ավերակ բեր-  
դեր, «քաղաքնիր» շատ ունենք Արագածում.  
Նրանց մեծ մասը դեռևս ուսումնասիրված չեն:

Մենք (Ղազնաֆարի խումբը) այցելեցինք  
լերկու բերդ. ա) Լուսաբերդ—Շիրաղալա և Ղազ-  
նաֆար գյուղերի միջև՝ Լուսաղբյուրի վերև, և  
բ) Ամասի բերդ—Ղազնաֆար և Թաքաուլու գյու-  
ղերի միջև. վերջինս ավելի կանգուն պատկեր  
ուներ: Բերդի պարիսպները 3 մետրից ավելի  
լայն են, շինված հուանց շղախի և ուրույն

ճարտարապետութեամբ, խոշոր քարերի կառուց-  
վածքով:

Ամասի բերդից վերև գտնվում էր Տերտե-  
րի բերդը, Ալթո.նթախտ լեռնալանջին, վորը  
մենք չկարողացանք այցելել. գտնվում է Թոնդ-  
րով և Նալով աղբյուրների մոտերքը:

11. Ջրի կույս. Գեղհովտի ձորի սկզբում  
դեռ հովտի մեջ գտնված կամուրջին չհասած (1  
կլմ. ներքև), արևմտյան կողմի դետակից 20 մե-  
տրը վերև առու կա, վորից 2 մետր վերև տընկ-  
ված է 2 մետր բարձրութեամբ մեծ քար, վորի  
դեպի առուն նայող լեռեսն ուղիղ է, քիչ ծըռ-  
ված դեպի ներքև. այդ քարն ունի արհեստական  
մեծ փոսեր, վորոնք քարի մեջտեղում համե-  
մատաբար մեծ են. լենթաղբվում է, վոր ջրի  
կուլտ (պաշտամունք) է լեղել այստեղ (Ղազնա-  
ֆարի խմբի աշխատանքը):

12. Մխով աղբյուր. Խառնարանից քիչ ներ-  
քև, փոքրիկ սարահարթում (Գեղհովտի վեր-  
նամասը, վորը մեծ խառնարանի մասն է կազ-  
մում) կա մի աղբյուր — Մխով աղբյուր անունով:

Այս աղբյուրի դիմաց, 3 մետր հեռավորութեան  
վրա և կես քառ. մետր տրամագծով, հողի մեջ  
տնկված է մի քար, վորի վրա բազմաթիվ ծա-  
կոտիններ կան գոյացած մեխի հարվածներից:  
Մեխերի հետքերը և կտրտանքը քարի մեջ դեռ  
նկատվում են:

Թե կրոնական ի՞նչ պաշատմունքի առարկա  
լե չեղել, այդ հայտնի չե (Պաղնաֆարի խմբի  
աշխատանքը):

13. Ամբերդ. Միջնադարյան Հայաստանի  
նշանավոր բերդ, վորը մինչև հիմա ել իր կի-  
սավեր վիճակով հանդերձ հանդիսանում ե ճար-  
տարապետական մեծ կոթող և մեծ հետաքրք-  
րութուն ե հարուցել (այցելել ե Վաղպատի  
խումբը):

14. Արխաշեն. Արհեստական ջրանցք, վոր  
ջուր ե վերցնում Սև լճից: Պիտք ե նշել, վոր  
Արազածի բոլոր լճերն ևս (Աեսսինգ, Բազու և  
այլն) արհեստական ջրանցքներով ջուր են բաց  
թողնում վոռոգման նպատակով:

15. Տասներկու պաներ. Ամբերդից քիչ  
վերև շինված են 12 պանտեր (առուններ), վո-  
րոնք առանձին — առանձին առունների միջոցով  
ջուր են տալիս տարբեր գյուղերի (այցելել ե  
Վաղպատի խումբը):

16. Ախթամուր բերդը. Վոսկեվազ գյուղի  
մոտերքում կա Ախթամուր անունով նախաուրար-  
տական տիպի բերդ և նրա շրջապատում բազմաթիվ  
մեզալիթյան հիշատակարաններ (այցելել ե  
Վաղպատի խումբը):

17. Ոյուղներ (նանապարհանեան) յեվ մեն-

հիր. Վոսկեթաս լեռան կողքին, Թալինից դե-  
պի Վերին Ապարան տանող ուղղությամբ, ձրգ-  
ված են ոչուղներ, վորոնք ցույց են տալիս  
ճանապարհի ուղղությունը: Այդ ճանապարհի  
լայնությունը և ոչուղների իրարից 10—20 մե-  
տրը հեռավորության վրա կանոնավորաբար ի-  
րար հաջորդելը ցույց է տալիս, վոր այդ ճանա-  
պարհը հին ժամանակները շատ բանուկ է լե-  
ղել: Այդ լեռնազրու թյունը հաստատվում է նաև  
նրանով, վոր հին ժամանակներում Թալինի շրջ-  
ջանը լեղել է մարդկային հզորագույն կենտրոն-  
ներից մեկը: Ոչուղների կողքին մի գեղեցիկ  
արհեստական շարվածք կար (այսպես ասած  
ոչուղների փնջավորում), մեջտեղը լերկու մե-  
տրը բարձրությամբ քար, վորը հավանաբար մեն-  
հիր է լեղել:

18. Կրաւեն առու՝ քաւնյակ կլմ. յերկա-  
րությամբ. Շոպենը հիշատակում է, վոր լերք  
այս լերկիրը ուսաների կողմից գրավվեց 1826-  
թվին, բաղմաթիվ ավերակ գյուղեր կային (Սո-  
գյութլիի լեռնաշրջան), վորոնք ավերակ էլին  
դարձել և այդպես մնացել ջուր չլինելու օրատ-  
ճառով:

Մոտ 100 տարի առաջ, լեթե չեմ սխալ-  
վում, Խաչո անունով մի ջրադադսպան շինում  
է կրաշեն առու, 10 կլմ—ից ավելի լերկարու-

Թյամբ և Արագածի ամենաբարձր լանջերից ջուր  
ե հասցնում Սոգյուլթյուլ լենթաշրջանի գյուղերին:  
Կրաշեն առուն գործում է մինչև հիմա (այդ  
առուն դիտել է Ղազնաֆարի խմբի բրիգադներից  
մեկը):

19. Նախաուրարսական արձանագրու-  
թյուններ. Տողերիս գրողը Վոսկեթաս լեռնագա-  
գաթից վոչ շատ հեռու հայտնաբերեց նախա-  
ուրարտական շրջանի արձանագրությունները,  
վորոնք պրոֆ. Քալանթարի լեզրակադրությամբ  
մինչև այդ հայտնաբերված նախահայկական  
նշանագրերի մեջ համարվում են ամենահինը  
և վորոնք հավանաբար հետագայում կատարե-  
լագործվելով վերածվել են այժազրերի:

Մեր այս արձանագրությունը քննության  
նյութ դարձավ Նյութական Կուլտուրայի Պատ-  
մության Ինստիտուտի նիստում (1934 թ. նոյեմ-  
բերի 3) և հաստատվեց, վոր այդ գիտական  
մեծ արժեք գւնի: Այդ առթիվ Ինստիտուտը վո-  
րոշեց՝ ա) հատուկ գիտական եքսպեդիցիա ու-  
ղարկել այնտեղ և բ) մինչև հիմա հայտնաբեր-  
ված այլ այժազրերի հետ միասին այս նոր գրա-  
նրված արձանագրությունը ևս հրատարակել  
(տես վորոշումը, եջ 6):

20. Բարձր լեռնային ողերեվութաբանա-  
կան կայան (3250 մետր բարձրության վրա).  
1931 թվից սկսած Գիտությունների Ակադեմիայի

կողմից կազմակերպված բարձր լեռնային հիդրո-  
բոս — ոգերևույթաբանական կայանը 3250 մետր  
բարձրության վրա, վորը և Սորհրդային Միու-  
թյան ամենաբարձր ոգերևույթաբանական կա-  
յաններից մեկն է:

Կայանը գտնվում է Սև լճից քիչ վերև (մոտ  
30 մետր բարձր), Արխաշեն գաղաթի մոտ, սա-  
րահարթի վրա: Սև լճի ափին կարտոֆիլ և այլ  
բանջարեղեններ ստանալու փորձերը մինչև  
1935 թ. վոչ մի արդյունք չեն տվել՝ ցուրտ և  
փոփոխական քամիների առկայության պատ-  
ճառով:

ԱՄՓՈՓՈՒՄ. Վերոհիշյալներից շատերը հայտ-  
նաբերվեցին միմիայն Աստղաձև արշավի ժա-  
մանակ: Վերջինիս պատմական կարեվորութունը  
կարելի է շեշտել թեկուզ միայն նրանով, վոր  
մասնակցողները գտան Հայաստանի բնակիչներին  
ամենահին դրանշաններից մի քանիսը:

Բացի մեր այս թվարկածներից, համապա-  
տասխան մասնադիտությամբ զբաղվողները հա-  
վաքեցին քարերի, բուլյսերի, դեղաբույսերի  
հավաքածոներ: Տուրիստները վարժվեցին  
լեռնային մարշրուտների, վորսացին վայրենացած  
մի այժ իր ուլով (Ղազնաֆարի խումբը), վորը  
նվիրվեց վալադներին. հավաքեցին բավարար

նյութեր ՀՍԽՀ—ի աշխարհագրութեան և լեռնագրութեան դասավանդման գծով: Տուրիստները լեզան հայերի և չեզդիների թոշատեղերում, ծանոթացան և ուսումնասիրեցին նրանց կենցաղը:

Վորջան շատ լինեն այսպիսի արշավանքներ, այնքան ավելի լավ:

Գ Ե Պ Ի Ա Ր Ա Գ Ա Մ Ի Գ Ա Գ Ա Թ Ը

(Տպավորութիւններ)

Արևն սկսում եր թեքվել դեպի մայրամուտ:  
Փշում եր զով քամին, և զգում ելինք լեռ-  
ների շունչը:

Աշտարակից դեպի Կարբի տանող խճու-  
ղին բարձրանում ե վոլորապտուկտ զառիվե-  
րով, վորը նեղ ե ու քարքարոտ: Յերբ բարձ-  
րանում եք դարավանդը, բացվում ե լայնար-  
ձակ հորիզոնը: Հեռուն տեսարանը փակում ե  
Արայի լիճը, իսկ ավելի հեռվում ուրվագծվում  
ե Շամիրամա լեռը:

Այժմ կոլտնտեսական գյուղն ե բազմել այդ լեռ-  
ների ստորոտին և կոլտնտեսական հանդերն են  
փռված նրանց շուրջը:

Ուրիշ մարդիկ: Տարբեր հուշեր: Նոր կյանք:

Ապարանի խճուղին լիքն եր հանգից վե-  
րադարձող կոլտնտեսուհիներով, վորոնք մեզ  
գլմավորում հլին ուրախ ժպիտով և ինչ-վոր  
փափսում ելին մեր լեռնից: Մեր ծղոտե լայ-

նեղը զլխարկներն որորվում ելին քամու ուժեղ հոսանքից: Հեռվում՝ ամպերի տակից գլուխը գուրս եր ցցել Արագածի հյուսիսային ամենաբարձր գագաթը:

Ողն սկսում եր նոսրանալ և զգացվում եր Արագածի ցրտաշունչ ողը: Ապարանում մեզ շրջապատեցին կոլտնտեսականները, լերիտասարդութունը: Բոլորն արդեն գիտելին Պրոլետարական տուրիզմի Արագածի աստղաձև արշավի մասին: Տեղի ընկերները մեզ համար պատրաստել ելին գիշերելու տեղ:

Ոգոստոսի 18-ն եր: Պայծառ առավոտ: Ապարանի կոլտնտեսական շուկան սկսում եր աշխուժանալ: Շրջակա գյուղերից, սարերից, լայլադներից իջնում ելին գյուղացիները բեռներով, մթերքներով:

Գործկոմի շենքի մոտ հավաքվել ելին կոլտնտեսականները, շրջանի պատասխանատու աշխատողները, լերիտասարդութունը: Այստեղ եր նաև բոլորից սիրված քյուրդ Համեն, Գործադիր կոմիտեյի նախագահի տեղակալը, վորը 12 տարի անընդհատ լեղել ե իր պոստում:

Բարձր տրամագրությամբ բարձում ենք ձիերը:

Առավոտյան ժամը 11-ին, հավաքված ընկերներն ուրախ բացականչութուններով մեզ ուղեկցեցին մինչև գյուղի ծալը:

Մենք անցնում ելինք Ձոջ ձորով: Արագածի հյուսիսային գագաթը ծածկվել էր մեր դիմաց ընկած լեռների լեռեռևում:

Ձիերը դժվարութեամբ ելին բարձրանում վերելքը:

Շնչառութիւնը դժվարանում էր, և մենք ակամայից դանդաղեցնում ելինք մեր քայլերը և շուտ-շուտ հանգիստ տալիս ձիերին:

Գեղեցիկ է Արագածի հյուսիսային լանջը:

Յերեկոյան մթնշաղին մեր լերթը կանգ առավ Տանգիրոմազ գյուղի նախկին ավերակ լայլադուռ, Ձինգիլ լեռան փեշերին հանգած հրաբուխի բեկորների և շինգիլ քարակուլտերի լաբիրինթի լեզրին, մի սառնորակ աղբյուրի մոտ, վորի դիմացը բացվում էր լերփներանգ ծաղիկների և դալար կանաչի մի գեղեցիկ պանորամ, վորը ձգվում էր շատ հեռու և վերջանում Միսիսանայի լեռնաշղթայի մոտքերում, տարածվելով կանաչավետ հովտում:

Սկսվեց հորդ անձրևը, վորն ամբողջ գիշերը տեղաց:

Ահռելի լե գիշերն Արագածի ձորերում: Մեռ մութը ամպերը, բարձրաբերձ լեռները, ավախների և ջրվեժների աղմուկը սարսափ են

նեշնչում անսովոր մարդուն: Ուժեղ անձրևի աղ-  
մուկին, ամպերի և ամպրոպի վորոտին միա-  
խառնվում ելին մեր լերգերի բարձր, ուրախ  
ձայները, վորոնք այդ ամենի վայրում ստեղ-  
ծում ելին մի գեղեցիկ սիմֆոնիա: Բնության  
այդ ահռելի տարերքը վոշնչով չեր կարող ըն-  
կրճել մեր կամքը և տոկունությունը՝ հաղթահա-  
րելու բոլոր դժվարությունները նվաճելու Արագածի  
հյուսիսային ամենաբարձր գագաթը, ամենա-  
դժվար մարշրուտով:

\* \* \*

Վաղ առավոտյան թեթև նախաճաշից հետո,  
մեր լերթը շարժվեց առաջ: Մենք քայլում  
ելինք վաղորդյան շաղով և գիշերվա հորդ անձրևի  
հետքերով պատած ծաղիկների միջով, լերփնե-  
րանգ, դալար գորգի վրայով: մենք անցնում ե-  
լինք Չինգիլ գագաթի մոտով 3437 մետր բար-  
ձունքի լանջերով:

Այստեղ՝ գեղատեսիլ լեռնային հովտում՝  
կարկաչուն առվակների, կամ առանձնակի ցրց-  
ված քարակույտերի ու փոքրիկ ժայռերի գե-  
ղեցիկ պանորամը լրացնում են լերկու փոքրիկ  
լճակներ՝ անգորր, ժպտուն, վորոնք քարտեղի  
վրա անուններ չունեն: Նրանցից մեկը, վորն  
ավելի մեծ է, տեղացիներն անվանում են «Սև  
լիճ» (Ղարա գյուլ):

— Անվանակոչենք, — բացականչում է ըն-  
կերներից մեկը:

—Անվանենք Պրուեստարական տուրիզմի անունով՝ «ՈՊՏԵ»,—պնդում եր մեր տուրիստական արշավի ղեկավարը: Յեւ այդ լիճը մենք այդպես կ'չեցինք:

Ուշ յերեկոյան մենք հյուսիսային գագաթի ստորտունն ելինք: Մեր շարքերը բավական նոսրացել էին: Տեղի ընկերները, վորոնք միացել էին մեզ Ապարանում, և մի ճարտարապետ—մեզ վաղուց էին թողել, լքել և վերադարձել: Յերկու Փրանսիացի տուրիստներ, իրենց թարգմանչի հետ, չկարողանալով հաղթահարել մարշրուտի դժվարությունները, վերադարձան Ղազնաֆար, յերբ մենք անցնելով Լճակների հովտի վերնամասով, հսկայական դժվարություններով իջանք Քաղցր Ղրի կանաչավետ հովիտը: Տուրիստական մեր արշավախմբից մնացել եր 8 հոգի:

Յերեկոյան մթնշաղին մեր վրանը կանգնեց Քաղցր Ղրի ձորում, հյուսիսային հաղթական գագաթի փեշերին ընկած փոքրիկ ձորակում, սալիտակ ալիքներով ղեպի վար խոյացող նրբակերտ Ղրվեժի մոտ, վորը շատ իրավամբ կենսադործկոմի վորոշումներով անվանակոչվեց «Ճուրխ»:

Ոգոստոսի 20-ի առավոտյան սկսվեց մեր վերելքը ղեպի հյուսիսային գագաթը:

Ողն ավելի լեր նոսրացել, և շնչառութիւնն  
ավելի դժվարացել:

Սա Պրոլետարական տուրիզմի կազմակեր-  
պած առաջին արշավախումբն էր, ամենադժ-  
վարին մարշրուտով դեպի հյուսիսային ամենա-  
բարձր գագաթը՝ 4096 մետր բարձրութեամբ:

Առաջին անգամ այդ բարձրութեան վրա  
պետք է ծածանվեր Պրոլետարական տուրիզմի  
կարմիր դրոշակը: Մարշրուտի դժվարութիւնն,  
անընդհատ վերելքը և վալրեջքը սպաննչում էր  
տոկունութիւն, կամքի ուժ և դիմացկունութիւն:  
Մենք քայլում էինք ալպյան բուսականութեամբ  
առատ լեռնալանջերով, կարմիր կակաչ, մանի-  
շակ, ճնձաղիկ և այլ գուլնզգուլն ու բազմերանգ  
ծաղիկներէ քաղցր բույրը շնչելով:

Լեռնագագաթից մեր առաջ բացվում էր մի  
գեղեցիկ պանորամ, ուր փուլել էին դաշ-  
տերն ու գլուղերը: Արարատյան լայնարձակ  
դաշտավայրը, իսկ մի քանի տասնչակ կիլոմետր  
հեռավորութեան վրա հաղթականորեն վեր է խո-  
լացել ալեհեր Մասիսը:

Աւազակներէ և լճերի ծով է Արագածը, հա-  
րուստ հանքային հարուստութիւններով, պատմա-  
կան հուշարձաններով, գեղեցիկ տեսարաններով:

Մենք մագլցում ենք:

Ալպյան գավազանները և պարանն ողնում:

Կն մեզ՝ ձորը չգլորվելու, ամուր կառչած  
նրանց՝ մենք դանդաղաշարժ քայլերով առաջ  
ենք ընթանում:

Ոգոստոսի 20-ի ցերեկվա ժամը 12-ն է:  
Մենք արդեն հյուսիսային գագաթի վրա լենք:  
Բոլորիս տրամադրութունը բարձր է, ուրախ:  
Մենք հաղթահարել ենք վերելքի բոլոր դժվար-  
ությունները:

Արագածի ամենաբարձր գագաթին ծածան-  
վեց Պրոլետարական տուրիզմի կարմիր դրոշա-  
կը: Բոլորս լերգում ենք «Ինտերնացիոնալ»-ը,  
մեր ձայնի հնչուն լելվեջները, մեր ուրախ բա-  
ցականչութունները սղոցում են թարմ ոգը,  
անցնում հեռու, հեռու ձորերը և կորչում ան-  
հայտության մեջ:

Վայրեջքը մի քանի անգամ դժվար է, քան  
վերելքը:

Մենք իջնում ենք լերբեմն զգուշության  
համար թոկի ոգնությամբ, իսկ մեր առաջ և  
ձախ կողմում ընկած ձորերն արձագանքում են  
մեր վոտքերի տակից գլորվող քարերի և ավա-  
զի գահավեժ աղմուկին:

Յերեկո լեր արդեն, լերը մենք ուղեփոր-  
վեցինք դեպի հարավ-արևմտյան լանջը,  
դեպի ողբերևութաբանական կայանը, փորտեղ

պետք ե հանդիպելինք աստղածև արշավի մաս-  
նակիցների մյուս խմբին, վորոնք նախորդ  
որը բարձրացած պիտի լինելին Մրագածի արե-  
վելյան գագաթը, իսկ նրանցից մի խումբը ևս  
մեզ նման բարձրացել եր ամենաբարձր գագաթը:

Մենք անցնում ենք լեռեք ջրվեժների սա-  
հանքի ուղղությամբ, մերթ բարձրանալով, մերթ  
իջնելով: Լուսնկա զիշեր եր, փչում եր զով  
քամին, լերը մենք լուռ, հոգնած և համրաքայլ  
վերջին պտույտը կատարեցինք և իջանք քար-  
քարոտ զառիվայրով դեպի ողերևութաբանա-  
կան կայանը:

Հեռվում լերևում եր մի փոքրիկ տնակ,  
վորտեղ նշմարվում եր մի աղոտ լույս, իսկ  
նրա կողքին՝ հազիվ տեսանելի Սև լիճը:

Կայանում հանգտացող մյուս խմբերի ըն-  
կերները զիմավորեցին մեզ բարձր ուռաներով,  
և լերեկոյան խավարի մեջ սկսվեց միտինգը:

\*  
\* \*

Ողերևութաբանական կայանից մեր ուղին  
ընկնում եր դեպի Սրթիկ: Մենք անցնում ելինք  
պատմական խոշոր հուշարձանների մոտով:

Իսկ Մանթաշի ձորը: Այս գեղատեսիլ հո-  
լակապ ձորում հոսում ե Կարկաչան կոչված  
գետակը:

Աստիճանաբար բացվում է մեր առաջ կանաչագարդ դաշտը՝ բարեբեր, բարգավաճ հողերով: Ծաղիկներին բազմազանությունը, աղբյուրներին առատությունը, քաղցր ու զով ողբ գրավում է բոլորին դեպի Արագածի լանջերը, Մանթաշի հովիտը:

Զուր չէ, վոր ժողովուրդը և մեր բանաստեղծները սիրել են Արագածը, յերգեր են հորինել գեղեցիկ Մանթաշի մասին:

«Յես վոր մեռնեմ, ինձի թաղեք

Ալագյազի լանջերում,

Վոր Մանթաշից հովերը գան

Վերաս հեան ու յերթանս:

(Ավ. Իսահակյան)

Արագածի աստղաձև արշավին մասնակցող բոլոր խմբերը, Պրուետ-տուրիզմի առաջին խոշոր արշավախումբը մեծ խանդավառությամբ և վոգևորությամբ հաղթահարելով լեռնային տուրիզմի բոլոր դժվարությունները, ոգոստոսի 22-ին վերադարձավ Յերևան:

ԴԵՊԻ ԱՐԱԳԱԾԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԳԱԳԱԹԸ

(ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԱՐԵԱՎԱԽԵՐԻ ՈՐԱԳՐԵՑ)

Հայաստանի Պրոլետարական տուրիզմի ընկերութիւնն Հանրապետական Խորհուրդը տենդորեն պատրաստվում էր լեռնային խոշոր մասսայական արշավի: Կազմակերպվում էր ասոդաձե գրոհ-արշավ դեպի Արագածի գագաթները (4096 մետր):

Դժվարին մարշրուտ էր:

Տուրիստական առաջին մարշրուտով մեկնող արշավախմբի նպատակն էր Ապարանի վրայով նվաճել Արագածի հյուսիսային ամենաբարձր գագաթը: Գագաթին կանգնեցնել տուրիստական դրբոշը: Ծանոթանալ Արագածի լեռնային տեղագրութիւնը և վերջնականապես ճշտել մարշրուտը դեպի Արագած

Խնդիրը և՛ բարդ էր և՛ դժվարին:

Առաջին մարշրուտի արշավախմբին մասնակցում ելին 12 տուրիստ, նրանց թվում չերկու Ֆրանսիացի ինտուրիստներ՝ Փարիզի համալսարանի լեզվագետ դասախոսներ՝ Միշել Ժոուենվալը, Լիզա Մարուն և Թարգման լատիշուհին:

Վորոշված էր: Արագածի տուրիստական արշավախմբերը մեկնում են Արագած ողոստոսի 17-ին:

Մենք տենդորեն պատրաստվում ելինք, սպասում արշավի որվան:

17 օգոստոսի

ՎԵՐՋԱՊԵՍ...

Ամառային մեղմ ու սթարգ չերեկո չե: Թեթև, զով քամին սուրում ե Յերևանի փողոցներում: Նա սրբում ե փողոցների փոշին, ոճապրտույտ դալարումներով բարձրացնում ե վեր, ցրում շենքերի տանիքների վրա, փողոցների ներս ընկած անկյուններում: Քամին զովացնում ե ձեմող հասարակությանը, պարում ե մի խուժք մարդկանց հետ, վորոնք սպասողական վիճակում կանգնած են Ռուբենի փողոցի նեղ մայթի վրա: Դրանք տուրիստներն են:

Մայթի վրա աշխույժ խոսակցելով ձեմում

են նաև չերկու Փրանսիացի ինտուրիստները  
ու թարգման լատշունին:

Բոլորս սպասում ենք ավտոմեքենային:  
Բոլորս սրտատրոփ ցանկանում ենք արշավը վոր-  
քան հնարավոր ե շուտ սկսել:

...Ավտոն մոտենում ե, հետևից թողնում  
փոշիախառն մի հետք ու կանգ առնում  
տեղում:

Մենք արդեն ավտոյումն ենք: Տեղավորում  
ենք մթերքների և տուրիստական պարկերը,  
խրերը, գավազանները:

Արշավախմբին հանձնվում ե տուրիստական  
գրոշը՝ Արագածի հյուսիսային ամենաբարձր  
գագաթին ամրացնելու համար:

Մեզ նայում են բազմամարդ հասարակու-  
թյունը, կինո լուսանկարչական ապարատները:

Հնչում ե արշավի ազդանշանը: Մեկեն  
չըխկում են լուսանկարչական ապարատները:  
Ավտոն հասարակության վողևորված բուռն աղ-  
մուկի մեջ պոկվում ե ստարտից, սլանում ե Ա-  
բովյան փողօցով ու բռնում Ապարանի ուղին:

ՀԱՆԱՊԱՐԶԻՆ

...Արագորեն սլանում ե ավտոն: Արևը վա-  
զուց թեքվել եր գենիթից. այժմ նրա թուլլ,

ճառագայթները վողողում են Արարատյան դաշ-  
տավայրը, լեռները, մեր առջևում ձգված խճու-  
ղին...

Հետզհետե ուժեղանում են Արագածից փչող  
քամիները:

Արագածը մոտենում է, ուռչում, մեծանում,  
ծածկում արևատ հորիզոնը:

Ավտոյում սկսվել է հետաքրքիր մի զրույց  
մեր արշավի, Արագածի մասին:

Աշավախմբի ղեկավար, լեռնարշավներում  
կոփված Ասատուրի աչքերը կրակվում են: Նա  
վողեվորված է, վողեվորված ենք և մենք:

Մեզնից ո՞վ չգիտե, վոր մեր արշավն ունի  
խոշոր գժվարություններ: Ո՞վ չգիտե, վոր հեռ-  
վից այնքան գեղատեսիլ չերևացող Արագածն  
ունի իր խորքերում բարձրաբերձ, անեղ ու  
սրածայր ժայռերի ահռելի շարաններ, անդունդ-  
ներ՝ խոր, վտանգավոր:

Ո՞վ չգիտե, վոր ամենաչնչին անզգուշությունն  
այդ վիթխարի ու անավոր լեռներում կարող է  
ճանապարհորդի համար ճակատագրական ու որ-  
հասական լինել:

Գիտե՞լինք, այդ պատճառով ել վողեվորված  
ե՞լինք, հպարտ: Մենք պատրաստ ենք ամեն

տեսակի դժվարութիւններն հաղթահարել, միայն  
թե հասնենք նպատակին:

— Իսկ դուք վորևէ լեռ բարձրացե՞լ եք, —  
հարցնում եմ կողքիս նստած լերիտասարդ Ֆրան-  
սուհուն:

Նա ժպտում ե, աչքերը կկոցելով նայում  
է լեռնային հեռուն: Հետո քամուց արձակված  
շեկ մազերն ուղղելով գլխի վրա, ասես լերդե-  
լով, կոտորտված ոտուներեն լեզվով պատասխա-  
նում է.

— Ո՛ր, այն, իհարկե, բարձրացել եմ Ալպերը:  
Յես գիտեմ բարձրանալ:

— Իսկ դու՞ք, — զիմում եմ Ֆրանսիացուն:

— Ո՛ր, այն, — Նրա մանր աչքերն ուշադիր  
նայում են ինձ, հետո լեռներին: Նրա նեղ դեմ-  
քի վրա թառած ալժվաքիթն ավելի չէ կար-  
մըրում: Բարակ շրթունքները մի պահ կծկվում  
են, հետո ժպտում.

— Յես տասը տարի չե տուրիստ եմ, այն,  
այն, բարձրացել եմ նույնիսկ Մոնբլանը...

— Շատ ուրախ եմ, — զիմում եմ Ֆրան-  
սիացուն. — կփորձենք ձեր ուժը, — անցնում է  
մտքովս:

Ավտոն վաղուց արդեն անցել էր Աշտա-  
րակը, Կարբին, մոտակա գյուղերը և այժմ  
ծանր հեոցով մոտենում էր Գուչակին:

Մեր աջ կողմում, իր ժայռոտ կողերը ցցած,  
վոսկեզոծ արևի լույսերում պտտվում էր Արալի  
լեռը:

— Ի՞նչ լեռ է այս, — դիմում է ինձ Փրանսուհին:

Յես նրան պատմում եմ հայկական հին լե-  
զենդան Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին:

— Ո՛, այո՛, շատ, շատ հետաքրքիր է, — ժրպ-  
տում է Փրանսուհին և նրա կասկածալից աչքերը  
նորից կկոցվում են դեղին շրջանակներով ակ-  
նոցների խորքում:

Նա ինձ պատմում է Փարիզի, Ֆրանսիայի  
մասին: Յես նրան ծանոթացնում եմ մեր կյան-  
քի վերելքին, սոցիալիստական շինարարու-  
թյանը, լեռկրի բնական գեղեցկություններին ու  
հարստություններին:

— Ո՛, այո՛, այո, — լերբեմն ընդհատում է  
ինձ Փրանսուհին, և նրա կկոցված աչքերի թա-  
փանցիկ հալացքում լես նկատում եմ, թե ինչ-  
պես նա ճգնում է հասկանալ բառերիս իմաստը:

Ահա Արադածի լանջերին փովում է Գու-  
չակ գյուղը:

Ավտոն ծանր փնջալով սլանում է առաջ՝

Թողնելով հետևից փոշու և ծխի հազիվ նկատելի մի հետք:

Արևը վաղուց սուզվել էր լեռների անդրնդում, միայն Արագածի սեպածև ժայռերի խորը փորվածքից, լուսարձակի պես, մթնշաղ յերկնահամարի վրա պարում էր վերջին լույսերի մի արյունոտ փունջ, վորը հետեզհետե մարում, չքանում էր:

Քամու հոսանքից որորվում են վարսակի արտերը: Հեռու ժայռերի վրայից շարժվում է վոչխարների հոտը: Լեռնային ազատ տարածությունների վրա իջնում է պարզ լեռնային չերեկոն:

Մենք մտնում ենք Ապարան: Ավտոն կանգ է առնում շրջանային կենտրոնի նորակառույց շենքերի մոտ:

18 սյուստոսի

ԱՊԱՐԱՆՈՒՄ

Գեղեցիկ է Ապարանի առավոտը:

Լեռների շրջանածև բարձր շղթան ողակել է գլուղի հեռավոր հորիզոնները: Ողբ մաքուր է, թարմ: Իր ահռելի կողն արևին ցցած՝ հրճվում է գեղատեսիլ Արագածը: Զգվում են հեռուն լայն, կանաչազարդ տափաստանները:

Մանոթանում ենք գյուղին, նոր շինարարութիւնը, կառուցվող նոր ելեկտրոկայանին: Ամենուր լեռ ու գետ ե:

Ահա շուկան: Հազարավոր կոլտնտեսականներ ու մենատնտեսներ շուկա վաճառքի լեն գուրս բերել իրենց ավելցուկ բարիքը: Շուկայում, փողոցներում, ամենուր կենդանութիւնն է, ուրախ աղմուկ, զվարթ բացականչութիւններ:

Արևը ջերմ է, դուրալի:

ԳԵՊԻ ԱՐԱԳԱՍ

Արևը զենիթումն էր, չերբ արշավախումբը զինված տուրխատական դավադաններով ու պարկերով, չերկու ձիերի վրա սննդամթերք բարձած, վոտքով սկսում է բարձրանալ Արագածը:

Ապարանից ձգվող նեղ արահետն առաջնորդում է մեզ դեպի Արագածի հետեզհետե բարձրացող լանջերը: Բայց ահա արահետը չքանում է ու մենք սկսում ենք բուսասպատ ժայռերով վեր բարձրանալ:

Գեղեցիկ է Արագածն իր թարմ, առողջարար ոդով ու քաղցրահամ ջրերով:

Քարերի, ժայռերի ճեղքերից կանաչապատ ավալներով հոսում են սառը ջրերի աղբյուրները:

Աղբյուրներից, անձրևի, ձյան ջրերից գոյացած բազմաթիվ փոքր լճակները թափանցիկ հայելիների պես փայլում են լեռան լանջերի նեղ հարթավայրերում:

Իսկ բնության կուսական տեսարաններն այնքան գունեղ են ու բազմապիսի, այնքան հրապուրիչ ու գեղատեսիլ:

Ճանապարհն սկսում է հետզհետե դժվարանալ: Ձիերը դժվարութամբ միայն կարողանում են վեր բարձրանալ: Փչում է լեռնային ծակող քամին, բայց մենք դեռ շարունակում ենք բարձրանալ:

Թարմ ողից լայնանում են թոքերը: Ավելի ուժգին է բաբախում սիրտը:

Յուրաքանչյուր քայլից ընդարձակվում է հեռու, ներքևում ձգված մշուշապատ հորիզոնը...

Ա ՐԱԳՐԱՅԵԼ Ե ՄՈՆԵԼԱՆԸ...

Յես մազլցում եմ անսովոր լեռանդով: Կանգ եմ առնում մի պահ: Դիտում եմ շուրջս: Լայն հովիտների լեզրերին ձգվում է հրաշագեղ լեռների անսահման շղթան:

Հարթավայրը մի ավսե լեր, գլուղերն ավսեյում ասես թե մանր սուռնիկերի ցաք ու ցրիվ կուլտեր...

Հեռու, հեռու, թվում է լեռների ընդերք-

ներից լավում ե հովվի հեռավոր, խուլ, ընդհատվող լեռքը:

Արևի թեժ սկավառակը մեկ գլորվում ե տիեզերքի անդունդը, մեկ չքանում ցրիվ ամպերի խորքը, մեկը ել լերևում նրանց ճեղքերից և ինչպես դեռատի աղջկա ամոթխած հայացքը՝ ժպտում լեռներին:

Շարունակում եմ նորից մագլցել: Ինձ հետ են ընկերներս: Մենք զվարթ ենք, առույգ: Շնչում ենք արագ: Մենք լուռ ենք: Բնության սքանչելի տեսարանները մեզ զբաղեցնում են, նրանք հրապուրում են, գերում:

— Ու՞ր են նրանք, — լսում եմ հանկարծ ընկերոջս ձայնը.

— Ովքե՞ր:

— Ինտուրիստները:

Կանգ ենք առնում: Փրանսիացիները զրգավարությամբ մագլցում են վեր:

Սպասում ենք նրանց: Մոտենում են:

Դուք հոգնե՞լ եք, — հարցնում եմ ֆրանսիացուն:

— Կոման (ինչպես): Նրա բարակ շրթունքները չոր տերևների պես հազիվ են շարժվում: Քրտինքի մանր կաթիլները ծորում են շառագունած նեղ գեմքի վրայով: Արևի կարմիր լույսերը պարում են փայլող արծվաքթի վրա:

— Դուք հոգնե՛լ եք, — այս անգամ ժպտալով կրկնում եմ հարցս:

— Ո, վո՛չ, ի՞նչ եք ասում, — ընդհատվող շնչառությունից թոթովում ե նա և անմիջապես թիկունքում քարին: Նրա մոտ քիչ հեռու տեղավորվում ե Ֆրանսուհին: Նրա ջերմող, կկոցված աչքերը, մի պահ փակվում են ակնոցների շրջանակների խորքում, հետո բացվում են, սեփեռվում լեռների հեռուն:

— Իսկ նրանք ավելի փորձված են, նրանք բարձրացել են Ալպերը, Մոնբլանը, — հեղնում եմ մտքումս:

Ինձ վողեվորում ե, վոր ընկերներիս տրամադրությունը բարձր ե, վոր նրանք իրենց զգում են շատ ավելի ամուր, անվրդով ու վճռական:

ԱՆՁՐԵՎԻ ՏԱԿ

Յերեկո չե: Մթնշաղ: Ամպերը կուտակվում են լեռների վրա: Սաստկանում ե քամին: Մենք անցնում ենք Տանգիրմազի դուրանները: Գիշերելու համար կանգ ենք առնում ջրառատ աղբյուրի և քարաշեն դատարկ ոբաների մոտ: Ձիերից իջեցնում ենք բեռները: Պատրաստվում ենք հանգստանալու, ընթրելու, չերբ սոսկալի կայծակը ճեղքում ե մռայլ, ամպամած չերկինքը, և անձրևի հորդ կաթիլները տեղում են մեզ վրա:

Մենք անմիջապես թագնւում ենք ցածր,  
անտանիք ոբաներից մեկում ու տանիքը ծած-  
կում բրեզենտե վրանով:

Անձրերը շարունակում ե տեղալ: Կայծալը  
ճեղքում ե մոռալլ լերկիւնքը, փալլատակում, ահ-  
ուելի դղրդոցով գալարվում հեռու: Խուլ արձա-  
գանքում են լեռների խորքերը: Անդունդները  
վոռնում են ավելի վալրագ, ավելի կատաղի:

Մենք կիսաթրջված ենք, անքուն, բայց ա-  
ռուլգ ենք, հպարտ:

Մենք կատակում ենք, պատմում ենք դեպ-  
քեր անցյալից, զրքերից, կյանքից: Մեր ա-  
ռողջ, լիաթոք ծիծաղը հնչում ե մենակցաց որա-  
լում:

Իսկ դրսում մութ ե, ցուրտ, տարերք...  
Անձրեի ծանր կաթիլները թակում են բրեզենտե  
տանիքը, կաթում վրանի ճեղքերից:

Մենք ուրախ ենք, վողեվորված:

19 սետտեմբ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՌԱՎՈՏԸ

Բացվում ե լեռնալին առավոտը:

Ով բարձր լեռների վրայից տեսել ե արևի  
ծագումը, կարո՞ղ ե լերքեե բնության այդ բս-  
քանչեղի տեսարանը մոռանալ:

Յերկիրնքն անսովոր պարզ ե: Ողբ թարմ ե,  
թափանցիկ: Արևի կարմրավառ փնջերը վողողում  
են բարձրաբերձ կատարները, լանջերը, հորի-  
զոնները...

Ո՛, այդ ըոպեն...

Հանկարծ հեռվում, շատ հեռվում լավում  
ե մեզմ գոռոց, վորը քամու հոսանքներից ուժե-  
ղանում, թուլանում ե:

Նայում ենք: Ինքաթնիուն ե, վորը հեռու  
ներքևում կողերն արևին տված սլանում ե բաց  
ողում: Նա թռչում ե Յերևանից Քիֆլիս: Նա  
չքանում ե լեռների խորքում, բայց նրա գոռո-  
ցը դեռ լերկար ժամանակ արձագանքում ե լեռ-  
նային թարմ ողում:

Մենք հրճվում ենք, վազվզում ժայռերի  
վրա: Քարերին թիկնած չորացնում ենք մեր  
թրջված զգեստները: Ճանկանում ենք արևի կեն-  
սառատ, դուրալի ջերմութունը կլանել, լցնել  
մեր լերակները...

Վերջապես մենք նախաճաշում ենք, վերցնում  
մեր զավագանները: Պարկերն ամրացնում ենք  
մեջքներիս, ձիերը բարձում և շարունակում  
ենք վերելքը:

Լեռների վրա

Լեռնային տեսարաններն անընդհատ փոփոխ-

վում են: Յուրաքանչյուր լանջային բարձունքի գագաթից բացվում են բնության նորանոր տեսարաններ, վորոնք մեկը մյուսից ավելի սքանչելի լեն ու գեղատեսիլ:

Ահա մեր առջև տարածվում է ընդարձակ լեռնային հարթավայրը: Նրա մեջտեղում քամու հոսանքներում ծփում են լերկու ապակենման լճակներ: Չախ և աջ կողմերում ձգվում են Արագածի հրաբխային սխտամի մեջ մտնող լեռնաշղթաները՝ Չինգիլ (3.339 մետր) և այլն:

Ուղիղ մեր առաջ, աչք լեռնաշղթաների խորքում, իր սեպաձև ժայռերով ցցվել, վեր է խոյացել Արագածի հյուսիսային ամենաբարձր գագաթը:

—Վերջապես, ահա թե վճրտեղ ենք բարձրանալու,—անցնում է մտքովս: Յե՛վ իմ ներսում ավելի բորբոքվում է արագ կերպով նպատակին հասնելու բուռն ցանկութունը:

ՍՏՈՐՈՏՈՒՄ

Մենք համառորեն շարունակում ենք բարձրանալ: Հարթավայրերը տեղի լեն տալիս հրակա սեպաձև ժայռերի Մենք մազլցում ենք նրանց սուր կատարները, իջնում ենք անհարթ ստորտները: Վերջապես հասնում ենք այն կետին,

վորից վերելքն սկսում ե ավելի ծանրանալ ու  
դժվարանալ:

Մենք վերջապես կանգ ենք առնում քա-  
րաժայռերից ցյված ահուելի բարձունքի ստո-  
րոտում: Ձիերն՝ արդեն ուժասպառ են: Նրանց  
մեզ հետ տանելն այլևս անմտութունն է:

Մենք իջեցնում ենք բեռները: Մնողամը-  
թերքը բաժանում ենք արշավախմբի անդամնե-  
րի մեջ և քիչ հանգստանալուց հետո նորից  
շարունակում վերելքը:

Ահա վեր խոչացած քարաժեռ բարձրունքը:  
Ի՞նչպիսի ուժերի, կամքի լարում եր պետք,  
վորպեսզի անցնելինք հրաբխային վիժումներից  
գոյացած կիլոմետրի վրա դեպի վեր ձգվող քա-  
րակույտերը:

Մեր զեմքերից առատորեն հոսում ե քրտինքը:  
Ծանրացած պարկերը մեզ ստիպում են ծռվել,  
թեքվել, կորցնել հավասարակշռութունը: Թո-  
կերը ցավացնելու չափ ձգում են ուսերը: Մեր  
վտաքերը սալթաքում են լպրծուն քարերի վրա-  
լից: Բավական եր մեզնից վորևե մեկի կող-  
մից մի չնչին անզգուշ շարժում, և նա կարող  
եր ժայռերի ահեղ ճեղքերի մեջ գլորվել, շար-  
դել գլուխն ու մարմինը...

Մենք մագլցում ենք ավելի համարձակ, ավելի  
համառ: Մենք հաղթահարում ենք քարաժեռ

բարձունքների վիթխարի շղթան և վերջապես  
կանգ առնում մի սարալանջի գագաթին:

Բացվում է մի սքանչելի տեսարան՝ մեր  
առջևում փռվում է Արարատյան ընդարձակ դաշ-  
տավայրը:

Մենք այլևս չենք սպասում: Քայլ առ քայլ  
մոտենում ենք մեր նպատակին: Իջնում ենք  
սարալանջը: Տասնյակ սառնորակ աղբյուրներ  
հոսում են, հեղեղում կանաչադարդ հարթավայ-  
րը: Մենք շուտով անցնում ենք տավարակը,  
հպարտորեն բաշը վեր ցցած սարալանջի կողե-  
րով թեքվում և հյուսիսից մոտենում ենք հյու-  
սիսային բարձր գագաթի ստորոտին:

Ահա նա, հյուսիսային գագաթը: Մենք լեռ-  
կար գիտում ենք մեր աչքերի առջև բացված  
սքանչելի պեյզաժը: Մենք մոռանում ենք մեր  
հոգնածությունը, անցած դժվարին ուղին: Մեզ  
գերում է հյուսիսային կողմից լեռան միանգա-  
մայն անմատչելի հպարտ կեցվածքը:

Ոորը, ընդարձակ ձորից, վիթխարի պատի պես  
ցցված է սեպածև ժայռերով վերասլաց գագաթը:  
Նրա լանջերին տեղ-տեղ կղզիների պես մնացած  
հավերժական սառույցներից հալվող ջրերն արագ  
ընթացքով վիժում են ձորը, խառնվում իրար  
ու խշշալով հոսում:

Կեսորը վաղուց անցել էր: Մեր առջև ընկած էր դեռ այնքան փորձություններով դժվարություններով լի ճանապարհը:

Մենք դեռևս պետք է մոտենանք խառնարանին և միայն այդտեղից ձգված թեք լանջով բարձրանանք գագաթը:

Սկսում ենք նորից մազլցել: Մեծ դժվարությամբ անցնում ենք հյուսիսային գագաթի արևմտյան լեռնաշղթան, հաղթահարում ենք անուշի քարաժայռերի հսկայական տարածությունները: Արդեն յերեկո յեր, յերբ մենք բոլորովին հոգնած՝ մոտենում ենք Քաղցր Ղրի հովտի սուր թեքությունն ունեցող բարձր սեպածև ու քարաժեռ յեզրին:

Մնում էր իջնել ձորը: Բայց ի՞նչպես. ժայռը հարթ էր ու թեք: Հեռու ներքևում հսկայական քարերի կույտերը պատել էին ստորոտը: Իջնելը չափազանց վտանգավոր էր, դժվար:

Իսկ ի՞նչ կարող էլինք անել: Ուրիշ չէլք չկար, անհնար էր:

Սկսում ենք իջնել: Մատներով ճանկատում ենք լերկ քարերը: Մանր քարավազը հոսում էր ցած: Հազիվ միայն կարողանում ենք մեր հավասարակշռությունը պահել:

Մի կերպ ինձ պահում եմ, նայում վեր։  
Փանսիացին քարերից կախվել, հազիվ միայն  
կարողանում ե վոտքերը շարժել... հանկարծ  
նրա վոտքերի տակի քարը պոկվում ե։ Քարը  
զղրզուցով գլորվում ե անդունդը՝ տանելով իր հետ  
քարավազի լերկար հոսանք... Ֆրանսիացին  
մնում ե կախված։ Նրա գունատ դեմքը մի պահ  
միայն լերևում ե աչքերիս։ Քարերի ու ավազի  
մի նոր հոսանք թափվում ե վերևից, այս ան-  
գամ ուղիղ ինձ վրա։

Վերջացավ,—մի վայրկյան անցնում ե մտ-  
քովս,—գլորվել ներքև՝ նշանակում եր ջարդ ու  
փշուր լինել։ Փախուստի մասին նույնիսկ մտա-  
ծելն ավելորդ եր։ Մի կերպ ճանկոտելով  
քարերը, մարմնովս մեկ սեղմվում եմ ժայռին։  
Քարեբախտաբար հոսանքը փոխում ե իր ըն-  
թացքը, նա ծանր հեոցով անցնում ե մոտովս և  
ահռելի դղրդունով փշրվում ստորոտի լերկ  
ժայռերի վրա։

Նայում եմ վեր՝ Ֆրանսիացին շարունա-  
կում եր զգուշորեն իջնել։

—Լավ ե, մոչինչ չի պատահել,—անցնում ե  
մտքովս։ Սկսում եմ իջնել։ Վերջապես ինձ հա-  
ջողվում ե իջնել ժայռի ստորոտը, անցնել  
ահռելի քարերի վրայով և մտնել Քաղցր ջրի հո-  
վիտը։

Արդեն չերեկո չեր, մթնշաղ: Արշավախում-  
բի բոլոր անդամները ձորումն են: Ինտուրխտ-  
ներն ուղղակի վողբերգական վիճակ են ապ-  
րում: Նրանց համար դժվար եր այլևս լեռնային  
սոսկալի դժվարությունները հաղթահարել: Նրանք  
վորոշում են այլևս չչարունակել վերելքը:  
Թողնում են մեզ ու հեռանում Ղազնաֆարի ուղ-  
ղությամբ: Նրանց հետ գնում են լատիշուհի  
թարգմանն ու հիվանդ ձկացող լայնաթիկունք  
ուսուցիչը՝ Սուրեն անունով:

Ձորում մնում ենք մենք, ընդամենը ութ  
հոգի: Մութն է, ճանապարհն անհնար է շարու-  
նակել:

Մթության մեջ, չերկնքի աստղազարդ ֆոնի  
վրա գծազրվում են Արագածի հյուսիսային և  
արևելյան գագաթների բարձր կոնտուրները: Լեռ-  
ներից հոսող ջրերի հսկա ջրվեժը ծանր շառաչու-  
նով փշրվում է լերկ քարերի վրա, ջրերը փըր-  
փըրած անսովոր աղմուկով հոսում են ձորի կա-  
նաչազարդ հովիտներով:

Ջրվեժից քիչ հեռու, առվակի ափին խփում  
ենք մեր վրանը: Նստած վրանի տակ՝ մթու-  
թյան մեջ մենք ուրախ զրուցում ենք անցած  
դժվարին ճանապարհի մասին:

Մենք գծում ենք մեր հետևյալ որվա ա-  
նելիքը:

Ի՞նչ քաղցր ե նիրհը հուզումներով լի ճա-  
նապարհորդութիւնից հետո... նստել ալկա ան-  
հընար ե: Մենք պառկում ենք ու անօրջապես  
քնում ջրվեժի մոնոտոն աղմուկի սրորով, վրա-  
նի տակ, մենավոր ձորում:

20 ոգոստոսի

ԽԱՌՆԱՐԱՆԻ ՅԵԶՐԻՆ

Արևը նոր եր լուսավորել հյուսիսային գա-  
գաթը, լերը մենք ձորով շարունակում ենք մեր  
վերելքը: Այսօր, ինչ գնով ել լինի, պետք ե բարձ-  
րանանք գագաթը: Այդ միտքը մեզ ավելի ու  
ավելի ուժ ու լեռանդ ե ներշնչում:

Առավոտյան ժամը ինն և կեսին մենք բարձ-  
րանում ենք ձորից և կանգ առնում վերջին  
կայանում, թամբաձև բարձունքի վրա, հսկա  
խառնարանի ավին:

Ահա Արագածի գագաթները: Նրանք չորսն  
են, սուր քարածերպերից կազմված:

Նրանք աղեղնաձև տեղավորված են 270  
աստիճան ունեցող մի շրջագծի վրա: Նրանցից  
ամենաբարձր կատարը, վորը կազմված ե սուր  
և ցից քարաժեռ մասերից, զետեղված ե հյուսի-  
սային կողմում և ունի 4.096 մետր բարձրու-  
թիւն: Բարձրութիւն տեսակետից լերկրորդ տե-

ղըն ե բունում արևմտյան գազաթն՝ ուղղված  
դեպի Լենինական: Նա ունի 4.081 մետր բարձ-  
րություն: Նրանցից հետո գալիս են հարավ—  
արևմտյան գազաթը՝ 3.916 մետր, և ապա արե-  
վելյան կատարը՝ 3.879 մետր բարձրություններով:

Բացի այդ չորս գլխավոր կատարներից, նույն  
չրջանագծի վրա տեղավորված ե մի հինգերորդ,  
ավելի ցածր գազաթ, վորը գտնվում ե ամենա-  
բարձր կատարի արևմտյան մասում:

Այդ բոլոր բարձունքներն իրար հետ միա-  
ցած կորածե փոսերով կազմում են աշխարհի ամենաբարձր խառնարաններից մեկը, ձյունա-  
կույտերով պատած Արագածի վիթխարի խառ-  
նարանը, վորն ունի մոտ 2 կիլոէտր լերկա-  
րություն և 1,6 կիլոմետր լայնություն:

Մառնարանն իր լերկարությամբ ձգված ե  
հյուսիս—արևմուտքից դեպի հարավ—արևելք:  
Այդ խառնարանի խորությունն ամենամիոս  
անդից մոտ 460 մետր ե:

ՀՕՅԵ ՄԵՏՐ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Վերջապես 10 ժամ 40 րոպեյին խառ-  
նարանի կողմից 75 աստիճան թեքությամբ ըս-  
կըսում ենք հյուսիսային ամենաբարձր գազաթը  
բարձրանալ:

Թողնելով մեր ծանր պարկերն ստորոտում,

այժմ թեթևացած, գավազանների ոգնութեամբ  
մագլցում ենք դեպի վեր:

Քանի քանի անգամ լեռան լանջի հսկայա-  
կան խորութեամբ թափված մանր քարերը մեզ  
լեռ են քաշել, քանի—քանի անգամ ժայռերից  
հսկա քարերը պոկվելով փորձել են մեզ ներքև  
գլորել: Մենք բարձրացել ենք ավելի համառ,  
ղգուշ, ավելի լեռանդուն:

Պոկված ժայռերն առելի զղրղոցով գլորվել  
են ցած՝ իրենց հետ տանելով քարերի ուժեղ  
ոսանքներ: Նրանց աղմուկը խորն արձագան-  
քել է համր լեռներում, բայց մենք համա-  
ռորեն շարունակել ենք մեր գրոհը, մեր վերել-  
քը: Վերջապես մոտ լերկու ժամից հետո (12  
ժամ 2<sup>1</sup> րոպեյին) մենք հասնում ենք ամենաբար-  
ձրը գագաթը:

— Ուռն, — գոչում ենք բոլորս միաձայն:

Մենք գտնվում ենք Հայաստանի ամենա-  
բարձր գագաթի՝ 4096 մետր բարձրութեան վրա:

Անսովոր բարձր տրամագրություն, ցնծու-  
թյան մի ալիք հեղեղում է ինձ:

Իմ ներքին աշխարհը բորբոքվում է մի ան-  
սահման հպարտութեամբ:

Ինչեր, ինչեր չեն կարող անել մարդկային  
ցանկությունն ու կամքը:

Մեր վոտքերի տակ՝ ներքևում լողում են

ամպերը: Նրանք սլանում են այնքան արագ, այն-  
քան ցրիվ: Նրանք ցնդում են մեր գլխի վերե-  
վում ու փոշիացած չքանում մշուշապատ լերկ-  
նակամարում՝ թողնելով մեզ վրա խոնավու-  
թյան մի հետք...

Արագածի լանջերի վրա, կանաչների մեջ  
փայլում են լեռնային լճերը:

Արագածի ահռելի բարձունքներն ուռուցիկ  
տափարակների նման տարածվել են ներքևում:

Նրանց հետևում, ինչպես ծովը, փոված է  
Արարատյան դաշտավայրը:

Հեռու, հեռու կապտավուն հորիզոնի վրա վեր  
են խոյացել դեպի լերկինք լերկու Մասիսները:

Հույսացրս ազահորեն թափառում է բարձ-  
րունքներից բարձրունք, հորիզոնից - հորիզոն:  
Ցանկանում եմ բոլորը դիտել, ընդգրկել բոր-  
բոքված կրճքով, ձուլել մտքերիս արագ թռչքում...

Նայում եմ հյուսիս՝ առջև մռայլ, բարձր,  
մշուշապատ անդունդն ե:

Հրաշագեղ, հմայիչ, անմոռանալի տեսա-  
րաններ...

\*  
\* \*

Մենք լեռան գագաթին ամրացնում ենք  
տուրիստական կարմիր դրոշը, վորն ունեք հե-  
տևյալ մակագրությունը՝

ՀՍԽՀ ՊՐՈՒԾՑԱՐԱՆԱՆ ՏՈՒՐԻԶՄ

17 ՌԿՈՍՏՈՍԻ, 1931 Ք՝

Դրոշի կողքին, քարերի մեջ տեղավորում ենք դատարկ մի տուփ, վորի մեջ դնում ենք արշավախմբի մարշրուտի արձանագրությունը և դազաթը բարձրացած արշավախմբի ութ անդամների անուն-ազգանունները: Դրանք են.

Վ. Արիստակեսյան (Պրոլետուրիզմի Ընկերության կենտխորհրդից, (Ս. Ասատրյան (մարշրուտի ղեկավար), Վ. Դարյան («Խ.Հ.» թերթից), Գուրգ. Սարյան («Ավանգարդ»-ից), Մ. Մինասյան (կարբիդի բանվոր), Մ. Մարգարյան (կոշկակար բանվոր), Ս. Յերեմյան (գիտական աշխատող), Վ. Կարսյան (նկարիչ):

ԱՐԱԳԱՍԻ ԱՏՈՐՈՏՈՒՄ

Արագածի հյուսիսային բարձր ստորոտում հանգստանալուց հետո, մենք սկսում ենք մեր վայրեջքը:

Վերելքին սովորելուց հետո մենք անչափ դժվարանում ենք իջնել: Ճանապարհը չափազանց դժվար էր, արգելքներով լի:

Բայց ել սվ ե նայում հողնածությանը, արգելքներին: մեզ ալեկոծում ե լեռանդի մի նոր թափ: Մենք մտնում ենք խառնարանի խորքը, անցնում ենք նրա հարաֆ — արևելյան կողմի լայն անդնդաձև բացվածքի սուր թեքությամբ, վորի ստորոտում կատաղի գահավեժ

սահանքով հոսում ե խառնարանի մեջ հավաքվող  
ձյունից և սառցակուլտերից սկիզբ առնող Գեղ-  
հովիտ գետակը:

Մենք մագլցում ենք սեպածև ժայռերի  
վրա, անցնում դեպի անդունդը ձգվող ձյունա-  
կուլտերի վրայով և միայն ուշ լերեկոյան վերջա-  
պես հասնում ենք ողբերևութաբանական կայան:

#### ԿԱՅԱՆՈՒՄ

Ողբերևութաբանական կայանը կառուցված  
ե 3.250 մետր բարձրության վրա Սև լճի մոտ:

Կայանը կառուցել ե Գիտությունների Ա-  
կադեմիան 1930 թվին, վորն իր տեսակով  
առաջիններից մինն ե Սորհրդային Միության  
մեջ, կայանում աշխատողները հատուկ սարքա-  
վորումների միջոցով բևտումնասիրում են Արա-  
գածի շրջապատի ողբերևութաբանական, կլիմա-  
յական և ջրային գործնական մեծ նշանակու-  
թյուն ունեցող հարցերը:

Կայանում մեզ դիմավորում են Արագածի  
աստղաձև մարշրոտներից մեկի՝ Ղազնաֆարի  
մարշրոտի մասնակիցները:

Մեզ տեղավորում են կայանի մաքուր,  
գեղեցիկ սենյակներից մեկում, տրամադրելով  
Ողբերևութաբանական կայանի աշխատակիցնե-  
րի փափուկ մահճակալները:

Ընթրում ենք, փոխադարձ պատմում մեր կատարած ճանապարհորդության տպավորությունները:

Ուշ գիշեր էր. տաք սենյակում քնում ենք փափուկ մահճակալների վրա:

21 ոգոստոսի

Կեղի Արթուր

Սուսանտա է: Յերկիրնքը մուսլ է: Մաղում է ձյունախառն անձրևը: Ամպերը կախվել են լեռների վրա, ճնշում են մառախլապատ հորիզոնը:

Կանգնել եմ լճի ափին: Լեռներում վոսնում է ցուրտ քամին, հեռցով սլանում հարթավայրերով: Մանր կոհակներով ծփում է լիճը, այնքան դուրախի, այնքան մեղմ...

Յեսս վերջին անգամ դիտում եմ կայանը, լիճը և միանում արգեն ճանապարհ ընկած արշավախմբերին:

Մենք արագ քայլերով քնում ենք դեպի Արթիկ:

Անձրևը դեռ շարունակում է մաղել Նրան հաջորդում է ուժեղ կարկուտը: Մենք քայլում ենք առանց կանգ առնելու. արհամարհում ենք լուրաքանչուր քայլի վրա մեզ հանդիպող դժվարությունները: Անցնում ենք մշուշապատ մի

շարք բարձունքներ և վերջապես իջնում կանաչապատ Մանթաշի ձորի ափերը:

Գեղեցիկ են Մանթաշի լայնարձակ հովիտները: Նրանք ծածկված են առատ բուսականությամբ: Զրերն այնքան վճիտ են, այնքան սառնորակ...

Հեռու հյուսիսում քարաժեռ բաշերով վեր խոյացած Արագածի գագաթները մշուշների ճեղքից իրենց տիտանային աչքերով իշխում են ընդարձակ տարածութունների վրա:

Հեողհետե գեղեցիկ տեսարանների մի ամբողջ շարք հաջորդում ե մեկը մյուսին:

Վերջապես մեր առջև տարածվում են Արթիկի ժպտադեմ ամառանոցները, իսկ քիչ հեռու՝ Շիրակի լայնարձակ դաշտավայրը:

Հնագետ պրոֆեսոր Աշխարհբեկ Քալանթարի առաջնորդությամբ մենք թեքվում ենք ճանապարհից մասնում Ղփչաղ գյուղը, վորտեղ մենք ծանոթանում ենք 12-րդ դարի կեսերին Չաքարե և Իվանե լեղբայրների կառուցած Հառիճա վանքին: Մենք մանրամասն գիտում, ուսումնասիրում ենք այդ պատմական խոշոր արժեք ունեցող հնությունը: Յերեկոյան դեմ մենք իջնում ենք Արթիկ: Ծանոթանում ենք տուֆի արտադրական պրոցեսներին և հենց նույն յերեկոյան գնացքով ուրախ տրամադրությամբ վերադառնում ենք Յերեան:

## ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԴԱՍԻ ԱՍՏՂԱԶԵՎ ԱՐՇԱՎԻՑ

Ամառային մի արևակեզ ու շոգ որ եր, յոգոստոսի 17—ը: Արևը կամաց կամաց անցավ Արարատի գագաթի մյուս կողմը և մոտենում էր Կողբա սրածայր սարին, չերբ մենք Վաղպատում, 17 տղա և չերեք աղջիկ, վերցրինք մեր ծանրոցները և սկսեցինք տեղավորվել ավտոյի մեջ:

Դեռ նոր ելինք տեղավորվել մեքենայի մեջ, չերբ հարևան տներից ու խանութներից սկսեցին մեզ մոտենալ շոգից հոգնած մարդիկ, կանաչք ու չերեխաներ և հետաքրքրությամբ հարցնել, թե ուր ենք գնում և ինչի համար: Չնայած մեր նախորոք բաժանած թուղիկներին, նորից բոլորին սիրով ու խանդավառությամբ պատասխանում ելինք՝ «Դեպի Արագածի բարձունքները»:

Ճանապարհին մեզ դիմավորեցին աշնանացանի հերկը կատարող տրակտորիստները, վորոնք ամպազուլն ծխի միջից տրակտորի ուրախ դղըրդյունին խառնելով իրենց դողացող չերգի ձայ-

նը ու գլխարկներն ողի մեջ շարժելով մեզ հա-  
ջողութուն ելին մաղթում:

Իե՞ն մի քանի լերգ հաղիվ ելինք լերգել,  
լերբ մեր աչքի առաջից անցավ նախկին խանա-  
կան Մոլլադուրսուն գյուղը, վորն այժմ կոչվում  
է ընկ. Շահումյանի անունով, վորի դաշտերում  
ու այգիներում քրտնաթոր աշխատում ելին կու-  
տնտեսականները... մի քանի բուսելից հետո այդ  
գյուղին հաջորդեց Փոքր Ոչական կամ ավելի  
ճիշտը՝ Նոր Դաշտ գյուղն իր նոր ու առողջա-  
պահական տներով և նորակառույց դպրոցով,  
վորի շուրջը հավաքվել ելին մանկհրապարակի  
թովաուն լերեխաներն ու իրենց մորաքույրի  
հետ լերգում ելին ու գովում մեր կոլխոզի ու  
բամբակի հերոսներին:

Ոչականի ձորաբերանի վոլորապտույտ ճա-  
նապարհին մեքենավարը հանկարծ կանգնեցրեց  
ավտոն և հայտարարեց, վոր «մեքենան փշա-  
ցել է, այստեղից այն կողմ գնալ չենք կարող,  
շուա արեք՝ իջեք»:

Մենք ծանրոցներս շալակած, տուրխտա-  
կան գավազանները ձեռքներիս մտանք Ոչական  
և առանց ժամանակ կորցնելու՝ հետիոտն դի-  
մեյինք դեպի Աշտարակ, վորպեսզի հանդիպենք  
Յերևանից մեկնող խմբին: Ճանապարհին մեզ  
գիմավորում ելին ավանակները բարձած կու-

խողովակները և աշխատավոր մենատնտեսները, վորոնք զամբշուղները, թաշկինակները և կողովները լցրած քաղցր խաղողով, տանձ ու խնձորով՝ այգիներից վերադառնում ելին տուն... Նրանցից լետ չելին մնում մատղաշ անասունների և գառների շարանները, վորոնց լետևից լերգով վազում ելին դպրոցական հասակի չեքխաները:

Արարատյան ընդարձակ դաշտում ա՛տուալին այդ որերին բանջարանոցների և այգիների հասունացած մրգերը վողողում ելին շրջանային կոլխոզ շուկաները և իրենց բազմատեսակութեամբ ու առատութեամբ դեպի իրենց ելին բերել Արագածի լանջերում ապրող պողոզուրկ գյուղերի աշխատավորներին, վորոնք լերկանիվ և քառանիվ սայլերին բարձած Արարատյան ընդարձակ դաշտի արգավանճդ հողերից ստացվող՝ Սուլթանի, Սաղախլուլի, Արտաշարի, Ճարձառի, Շալախի ծիրանի, շաքարի քաղցրութեամբ ձմրուկի, սելսի և դալար վարունգների պարկերը, կամ արեից կարմրած քաղցրահյութ խաղողի ու սալորների կողովները, մեկը — մյուսի լետևից շարված՝ ինչպես քարավան, առաջ ելին գնում դեպի Արագածի լանջերը, իրենց հետևից թողնելով անիվների գծած հետքերը:

Արևն իր վերջին հրաժեշտն եր տվել Աշտարակի բարձր կուռերներին ու սարերի կատարներին, աշխատանքից վերադարձած աշխատավոր գյուղացիներին և իր կարմիր ճառագայթները կամաց-կամաց բարձրացնում եր դեպի մոտակա բլուրներից լերկացող Արայի (Ծաղկեվանք) և Արադածի լեռան լանջերին լեղած բարձունքները, վորոնք այդ լույսի տակ մի սքանչելի տեսարան ելին ներկայացնում: Ինչպես այժյամբ լեռներում, մեր տուրիստները ձրգտում ելին թափառել այդ բնական տեսարանների մեջ:

Յերևանից մեկնող խմբերն Աշտարակից արդեն անցել ելին, և մենք ստիպված կրկին հետիոտն շարունակեցինք մեր ճանապարհը:

Մեր տուրիստներն առանց հուսալքվելու, համառությամբ առաջ ելին գնում:

Գիշերային լուռության մեջ մեր լերդի ձայնը գնում եր հեռու, շատ հեռու, ձայնակցելու ձորերում քչքչացող ջրերի և մթության մեջ խրճուղու վրա մեզնից բավական հեռու գնացող բրիչկայի անխմբի ձայներին, վորոնք միախառնվելով մի գմալեցուցիչ ու դյուրիչ տպավորութուն ելին թողնում լսողների վրա, իսկ այդ մեր տոկուն տուրիստներին ավելի ու ավելի լեր վողկորվում:

Գիշերաչին մթության մեջ լսվում եր քիչ հեռու ձորակով անցնող Քասախ գետի քշփշոցն ու խշխշոցը և նրա շրջապատի բարձր բլուրների կատարից վաչնասուն արձակող շարագուշակ բլերի և ծղրիդների ձայնակցությունը:

Լուսինն անցավ Արագածի լեռերը հանգրստանալու, ընդարձակ չերկնակամարում թողնելով անթիվ ու անհամար աստղերը: Մեր տուրխտներն առանց ընկճվելու հասան Արտաշավան գլուղը:

Մեզ հետ չեկող լերեք տուրխտունիները գրեթե քայլելու անընդունակ ելին դարձել, փոքրիկ խորհրդակցությունից հետո վորոշեցինք գլուղի ծայրերի կալերից մեկում մի փոքր հանգրստանալ և ապա շարունակել մեր ճանապարհը...

Մեր հողնած տուրխտները սկսեցին մեկը մյուսի հետևից քաղցր նիրհել փափուկ անկողին հանդիսացող՝ կալում փռված ցորենի քյուլաշի մեջ... Հազիվ թե մեկ ու կես ժամ հանգստից հետո առաջ շարժվեցինք:

Գիշերաչին մթության մեջ, աստղերի ազոտ լույսի տակ, նորահարսի պես մշուշի քողով ծածկված իրար հետևից գալիս անցնում ելին դեպի Ղազնաֆար տանող ճանապարհի մոտերքը շարված Դոթուր, Ափնագեղ, Բաղարջուղ, Բլխեր, Շիրաղալա և այլն գլուղերը...

Գիշերը կամաց կամաց անհետանում էր իր հետ տանելով թանձր մշուշը: Յերկնակամարում լողացող անթիվ աստղերը մեկը մյուսի հետևից անհետանում էլին մեր աչքից:

Արեգակը նորահարսի պես նոր էր բացել իր ջերմադատ չերեսը, չիրք մենք մտանք Ղազնաֆար և ուղևորվեցինք դեպի դպրոցը, վորի դռների մոտ լվացվում էլին քնից նոր արթնացած՝ Յերևանի տուրիստները: Նրանք ուրախ և աշխուժ վոգեվորությամբ դիմավորեցին մեզ, և յերբ նրանք տեղն ու տեղը ծանոթացան մեր անցած գիշերալին հետիոտն ճանապարհորդությանը (40 կրմ.) բոլորը միաբերան մեզ անվանեցին «իսկական ու համառ տուրիստներ»: Իսկ Հայ կինոյի նկարիչները վորսացին այդ մերձեցման մոմենտն ու սկսեցին նկարահանել...

Վերջապես մենք միացանք Յերևանի լավագույն տուրիստներին, վորի ղեկավարներն էլին վորձառու տուրիստ ընկ. Ջ. Կորկոտյանը և պրոֆեսոր Գալանթար Աշխարհբեկը: Նրանք ուշացրին արշավը և թույլ տվին մի ժամի չափ մեզ հանգստանալու:

Սկսվեց արշավը: Մենք կամաց-կամաց անցանք Լուսաղբյուրի ձորը, ուր և ճշտեցինք մինչև այժմ սոսկ լենթադրությամբ գիացած Շիրազալալի քարածխի հետքերը: Այստեղ գանը-

վում եր տոհմային հասարակարգից մնացած՝ ա-  
հագին քարերից շարված կիսավեր բերդը, վորի  
մոտերքը նկատվում եր արհեստական առուներ-  
րի հետքեր: Այդ նույն ժամանակաշրջանի և  
նույն կառուցվածքով մի բերդ ել կար Ղազնա-  
ֆարի ձորում, վորը կոչվում եր Ամասի բերդ:  
Այդ բերդի մասին մանրամասն բացատրության  
ե տալիս պրոֆ. Աշխարհբեկը:

Համառ քայլերով առաջ ենք գնում դեպի  
Լեսսինգ լիճը: Ծանապարհին մեր յուրաքան-  
չուր քայլափոխին աջ ու ձախ փախչում ելին  
անթիվ մորեխներ՝ ինչպես վտանգի լենթարկված,  
խուճապի մատնված փեթակի մեղուներ:

Վալադի առաջնորդությամբ սկսեցինք կա-  
մաց-կամաց թավիշ կանաչների վրայով ու դե-  
մի ցանքսերի միջով բարձրանալ դեպի Չոխկ  
աղբյուրը, վորի քաղցրահամ և սառը ջուրը մոտ  
մի մետր բարձրությամբ թափվում ե քարերի  
վրա ու ձայն բարձրացնում, հենց այդ պատ-  
ճառով ել կոչվում եր Չոխկ աղբյուր, չնայած  
վոր ջուրն այնքան ել շատ չեր:

Աղբյուրի լեզերբի թավիշ կանաչների  
մեջ մի փոքր հանգստանալուց և ճաշելուց  
հետո սկսեցինք առաջ շարժվել դեպի նախկին  
Ամրոյի լիճը, վորն այժմ կոչվում ե Լեսսինգ  
լիճ: Դեռ առաջ չելինք շարժվել, լերբ Յերևա-

նի խմբից Վարսիկը, վորին մենք «մինուճար»  
եյինք կանչում, վորովհետև Յերևանի խմբի  
միակ աղջիկն էր, հանկարծ նկատեց խորհրդա-  
լին հսկա արծվին, ոգանաովին, վորը կտրելով  
Արարատյան գաշտավայրը՝ անցնում էր մեզնից  
ներքև, Ապարանի հովտով. հազիվ էր լավում  
նրա սրոպելների շռինդը: Մենք ավելի բարձր  
եյինք քան սավառնակը:

Արևը կամաց կամաց մոտենում էր իր հան-  
գըստարանին: Մնում էր վերջին բլուրը, վոր  
բարձրանալինք ու իջնելինք Լեսսինգի ափը...  
Տուրխատներից մի քանիսի դեմքին նկատվում  
եյին հոգնածության նշաններ... Մենք սկսե-  
ցինք ոգնել մեր հոգնած ընկերներին՝ վերցնե-  
լով նրանց ծանրոցները և թևանցուկ արտօժ,  
լերդ ու կատակով առաջ գնացինք: Մի քանի  
րոպեից հետո արդեն այդ բարձրության գա-  
գաթին եյինք, և մեր առաջ բացվեց մի սքան-  
չելի տեսարան: Մայրամուտի վոսկեգուլն շողե-  
րըն անդրադարձել եյին լերկնակամարի վրա՝  
աալով նրան վոսկե շղարշի գուլն, վորի լույսի  
տակ վխտում եյին քարափների լերգելչ կաքավ-  
ներն ու լորերը, և այդ բոլորն ի մի խմբվելով  
սկսեց ավճի վոգևորել մեզ, և մենք արագ լեր-  
գելով մոտեցանք լճափին:

Սկսեցինք լվացվել և խմել այդ լիճը թափվող

կարկտի սառնությունն ունեցող առվակի քաղց-  
րահամ ջուրը: Սկսվեց յերեկոյան մեր ընթրիքը,  
վորը դեռ չեցինք վերջացրել, յերբ հանկարծ  
մեր հորիզոնը պատեցին անձրևաբեր մթին ամ-  
պերը, վորոնց ծալքերի տակից մերթ ընդ մերթ  
ուժգին փայլատակում եր կայծակն ու իր շլա-  
ցուցիչ լույսով լուսավորում հսկա քարակույտե-  
րն ու կապույտ լիճը ու այդ լեռնային ամայի  
տարածությունը լցնում եր ահռելի ձայնով.  
սկսեցին կաթկթալ անձրևի խոշոր կաթիլները:  
Կիսատ թողինք մեր ընթրիքը և սկսեցինք նա-  
խամարդու պես մեզ հաւար պատասպարան փընտ-  
ռել, սակայն չգտանք և վոչ մի քարանձավ:  
Սկսեցինք պատրաստել հովվական քարաշար  
տնակներ՝ ծածկելով ադեալներով ու վերաբ-  
կուններով: Մի քանի լոպեչի ընթացքում պատ-  
րաստեցինք 7 այգալիսի վրաններ, վորտեղ «պա-  
տըսպարվեցինք» լեռնային յուրահատուկ ջրա-  
ռատ, հորդ անձրևից... Այբովջ գիշերն այգպե-  
կծկված՝ անցկացրինք տեղացող անձրևի տակ:  
Գիշերային թանձր խավարի միջից լսվում եին  
հարևան տնակներից «մինուճար» Վարսիկի, իսկ  
մեր տնակից՝ մեր լեռնակ Լիլու, Թամարի ու  
Յերմոնիալի լերդի ձայները, վորոնց ձայնակ-  
ցում ելին ծխախոտից ու լեռնային սառը ո-  
ղից խոպոտած ձայներով տղաները, սկսվում ե-  
փոխադարձ հյուրագնացություն անետուն:

Բոլորը թրջված են:

Արևելքն սկսեց զարդարվել վարդագույն  
թավիշ շղարշով, վորի հետևից ամոթխած հարսի  
նման զաղտագողի դուրս հանեց իր գեմքը արե-  
գակն ու իր շողերով սկսեց չորացնել ու տա-  
քացնել թրջված տոկունն ու համառ տուրխատ-  
ներին:

Ավարտեցինք մեր ուսումնասիրությունը և  
սկսեցինք առաջ շարժվել. մինչ այդ՝ կինո նը-  
կարիչները նկարահանում ելին մեր հետազո-  
տությունները, գիշերային ոթևանները, լիճը,  
բնական գեղեցիկ տեսարաններն ու լողացող  
տուրխատներին:

Չորաբերանին, լճակների հովտում մաշրու-  
տի դեկավար ԿՈՐԿՈՏՅԱՆԸ հայտարարեց. ովքեր  
ցանկանում են հյուսիսային ամենաբարձր գա-  
զաթը բարձրանալ, թող մեզնից բաժանվեն և  
գնան այս կողմից դեպի խառնարանը—այնտե-  
ղից գագաթը. իսկ ովքեր չեն ցանկանում բարձ-  
րանալ գագաթը, թող մեզ հետ շարունակեն  
ճանապարհը Մխով աղբյուր՝ վորտեղից կանց-  
նենք Արագածի խառնարանը և կսպասենք իջ-  
նողներին:

Սմբից անջատվեցին 8 տուրխատ, վորից 5-ը  
Յերևանի, իսկ 3-ը Վաղպատի խմբից: 8  
տուրխատները նպատակ ունենալով արշավել ա-

մենաբարձր գազաթը, այժմամի պես ցատկոտե-  
լով և Արազածի մասին անցյալի հուշերը պատ-  
մելով՝ առաջ ելին գնում բազմապիսի հսկա քա-  
րակույտների կամ խճանման մանր քարերի  
կույտերի վրայով ու ձորակի կանաչապատ հո-  
վիտներով դեպի հյուսիսային բարձր գազաթը:  
Ամառային արեգակի ջերմառատ շողերը հանդի-  
պելով ձորի լեռ քարակույտերին՝ անդրա-  
դառնում ելին ու ձորը լցնում շնչահեղձ ողով...  
Տուրիստ ջրվեժի մոտ սենք վոլորապտուկտ նեղ  
արահետով յերբեմն ձյունապատ դաշտերով ու-  
լերբեմն ել քչքչացող և դեպի ձորը վազող առվակ-  
ները կլանող քարակույտերի վրայով համառու-  
թյամբ մագլցում ելինք վեր... Վերջապես հասանք  
հյուսիսային ամենաբարձր և հարավ—արևելյան  
գազաթների միջև ընկած կամրջակին, ուր մի  
փոքր հանգստանալուց հետո սկսեցինք դեպի  
վեր մագլցել... Արեգակը կամաց կամաց անց-  
նում եր Արարատի գազաթի արևմտյան կողմը:  
Լեռնային ողը գերծ եր դաշտային խեղդող տո-  
թից ու վարակիչ խառնուրդներից. չուրաքան-  
չուր տուրիստ կամ առողջութուն փնտռող մար-  
դը պետք ե ամառային ամիսներին լինի Արազա-  
ծի վրա, շնչի նրա առողջարար, թարմ, թթվածնով  
ոգոնացած ողը ու խմի քաղցրահամ և սառնորակ-  
բլուրավոր աղբյուրների ջրերը, լսի քարափնե

րից յերգող կաքավների ու լորերի ներդաշնակ համերգը և զմայլվի այդ պահին:

Վերջապես 4—5 ժամ համառությամբ մագրլցելուց հետո ոգոստոսի 19-ին մեր տոկուն տուրիստներն աստղաձև արշավի խմբերից առաջինը նվաճեցին Արագածի հյուսիսային ամենաբարձր 4096 մետր բարձրութունն ունեցող գագաթը: Մեր առջև բացված եր մեծ և փոքր Կովկասի լեռնաշղթաներով ձգված ընդարձակ հորիզոնը, շրջապատված արևելյան կողմից Գեղամա լեռնաշղթայով, հարավային կողմից՝ Մեծ և Փոքր Արարատով: Արևմտյան կողմից սրածերպ կողբի լեռնաշղթայով և հյուսիսային կողմից՝ Փամբակի լեռնաշղթայով, Վորոնք իրար հետ միացած՝ մի մեծ ավազանի տպավորութուն են թողնում... Գեպի հյուսիս—արևելք Գեղամա լեռների միջից մշուշապատ քողը լերեփին կապուլյտին եր տալիս Սևանա լիճը... Հեռու մառախլապատ հորիզոնում լերևում եր Շիրակի ընդարձակ դաշտը, վոր գալիս վերջանում եր Արագածի ստորոտում, Մանթաշի ձորի կանաչագարդ հովտում...

Հեռադիտակի ապակիները հեշտությամբ մեզ մոտեցնում ելին Յերևանի ու Լենինականի շրջապատում աշխատող գործարանների ծխնելույզներից բարձրացող թանձր ծխի քուլաները և Յերևանից դեպի Լենինական գալարուն իժի

նման ձգվող լերկաթուղու վրայով քրտնաթոր  
ու հեալով, սև ծուխ արձակելով սլընթաց սլա-  
ցող շոգեշարժը:

Կազմեցինք փոքրիկ արձանագրութիւն՝ նշե-  
լով բարձրացող 8 համառ տուրիստների անուն  
ազգանունները, վորտեղացի լինելը, բարձրա-  
նալու նպատակը, գնելով մի դատարկ փամ-  
փուշտի մեջ՝ տեղավորեցինք գազաթի սրածե-  
քարերի արանքում և այդ գազաթի աննկարա-  
գրելի տեսարանում նկարվելուց հնտո, սկսեցինք  
կամաց կամաց իջնել:

Հենց խառնարանի մոտ լեղած յղբջուրներից  
սկիզբ եր առնում մի գիժ գետ, վորը մեծ ջրը-  
վեժներով վազում եր դեպի Գեղհովիտի կիրճը:

Այստեղ, Արագածի հրաբխալին խառնարա-  
նում, յուրաքանչյուր հետաքրքրվող կարող է  
գտնել մաքուր և ինքնածին ծծմբի փոքր տա-  
րածութիւն, վորտեղ ինքնածին ծծումբը լերե-  
վում է տանիքների ջրթափներից կախված սառցի  
լուլաների նման:

Սառնարանից մի կիլոմետր ցած իրար  
հաջորդելով գահավիժում են 3 ջրվեժներ, վո-  
րոնցից միջինը մոտ 150 մետր բարձրութիւնից է  
ցած թափվում, իսկ 1-ինը և 3-ը՝ 50—60 մե-  
տրը բարձրութիւնից: 2-րդ ջրվեժն այնքան սը-  
րընթած եր թափվում, վոր ջրի մուկեկուլները

վորպես ծուխ կամ փոշի, մեկից— լերկու մետր բարձրանում ելին ոգի մեջ և նորից իջնում ջրի վրա. առաջին իսկ հայացքից կարծես թե ծուխ եր բարձրանում այդ հսկա ջրվեժից: Գեղհովտի գետն են թափվում մի քանի վտակներ, վորոնք սկիզբ են առնում նրա լերկու կողմը գտնվող բարձր սարերի ձյունապատ գագաթներից, վորոնք իրենց մեջ պարունակում են հանքային զանազան բաղադրություններ, ինչպես լերկաթ, ծծումբ և այլն: Գեղհովտի կիրճում կարելի չե գտնել Արագածի քարերի բոլոր տեսակները:

Արևն առդեն թագնվել եր արևմտյան գագաթի հետևը, և լերեկոյան սառը քամին միանում եր ջրվեժից թափվող ջրի սառը հոսանքին և ամբողջ կիրճը լցնում սառը քամով: Հենց այդ պահին եր, լերը մենք անսպասելի կերպով հանդիպեցինք մի քարաժայռի, վորտեղից կարելի չե միայն թոկերով կապվել և իջնել հովիտը, սակայն մենք այդ հարմարությունը չունեյինք. կամ պետք ե վերադառնալինք և կամ 70—75 աստիճանի թեքությամբ, մոտ 100 մետրը լայնություն ունեցող սառցադաշտից պետք ե անցնելինք մյուս կողմը... Այլապես վոչ մի լելք չկար: Ստիպված սկսեցինք այդ ահագին սառցադաշտն անցնել, լուրաքանչյուր քայլի հա-

մար տուրխտական գավաղանով փորելով փոքրիկ փոտնատեղեր. բավական եր մի փոքրիկ անզգուշություն, մի ակնթարթում սառցադաշտից ցած՝ քարակուլտի վրա կհանդէնչիր, վորպես մի անշնչացած ելակ: Մեր ընկերներինց ՄԱՄԻԿՈՆԸ, վորն ավելի համառ կամքի տեր եր, սկսեց քարաժայռի քարերինց կախվելով իջնել ցած. հաղիվ 4—6 մետր իջած լինելը, չերբ աղաղակեց՝ «այլևս ճանապարհ չկա»: Վոչ մի հնարավորութիւն չունելինք նրան վեր բարձրացնելու. միայն խորհուրդ տվինք, վոր մոտենա սառցադաշտին, մեզ նման սառադաշտը կտորի և անցնի. բայց հաղիվ եր նա մի քանի քայլ առաջ անցել, չերբ սայթաքեց ու գոռալով գլորվեց դեպի ձորը... Մենք ապուշ կտրած, քարացած՝ դիտում ելինք այդ վերահաս պատահարը... մի քանի վայրկյանից հետո ձորակի խորքում սառցադաշտի տակ քարակուլտերի վրայից հաղիվ լսելի ձայնով կանչեց՝ «յեսս վողջ եմ»:

Վերջապես մենք ևս անցանք այդ սառցադաշտը և սկսեցինք կամաց-կամաց իջնել ձորը, ու նորից բարձրանալ, անցնել բարձրավանդակը: Արեգակը վաղուց իր վերջին շողերը թափցրել եր արևմուտքում, և մեկը մյուսի հետեվից սկսեցին փայլփլել ընդարձակ հորիզոնում անթիվ ուանհամար աստղեր, իսկ բարձր սարածերպ

դադաթներին ու ձորակի ջրերին նորից վողջու-  
նի լեր դուրս լեկել իննորյա կաթնա-  
գուլն լույս արձակող լուսինը, վորի լույսով  
հնարավոր չեր շարունակել այդ քարակույտերի  
վրայով բարձրացող ճանապարհը:

Գիշերային փշող քամուց և մերթ-մերթ  
կաթկթող անձրևից պատսպարվելու համար մենք  
սկսեցինք ծալքավոր քարակույտերի մեջ քարան-  
ձավ վորոնել, վորը շատ շուտով գտանք ու  
սկսեցինք շոգից փախչող գառների նման խըմբ-  
վել այդ փոքրիկ քարանձավի առաջ: Փոքր հան-  
գտաից ու ընթրիքից հետո սահմանեցինք մե-  
կական ժամ հերթապահութուն, զենքի փոխա-  
րեն հերթապահ պահակի ձեռքը տալով ժամա-  
ցույցը, տուրխատական դավադանը և դանակի մե-  
ծությամբ վորսորդական դաշույնը, վորով ար-  
թուն պահակը պետք է հսկեր իր քնած ընկեր-  
ներին-տուրխատներին: Այսպես շարունակվեց  
մինչև վերջը:

Լուսինը վաղուց անհետացել եր՝ չերկնա-  
կամարում թողնելով բազմաթիվ աստղեր, վո-  
րոնց ադոա լույսը չեր լուսավորում ձորակը:  
Չորը լցված եր սև ծխի նմանվող թանձր խա-  
վարով, և շրջապատում չեր թվում վոչ մի ձայն,  
վոչ մի շուկ... Հանկարծ հերթապահը հրելով  
սկսեց արթնացնել մեզ. «Տղերք, շուտ արեք,

վեր կացեք, դալլերը ձորից դեպի մեզ են ար-  
շավում. տեսեք տեսեք՝ ինչպես են փալլատակում  
նրանց կրակոտ աչքերը»։ Իսկապես դիշերային  
խավարի մեջ փալլփլում ելին մի խումբ գիշատիչ-  
ների պեծին տվող աչքերը. կարծես հեռվում  
մի խումբ մարդիկ ծխախոտ ելին ծխում։

Իսկույն վտառի լեյանք, ինչպես ռազմիկ-  
ները վտանգի պահին, սկսեցինք նախամարդու-  
պես պաշտպանութան միջոցներ փնտռել—գոռալ,  
շվացնել, վորսորդի շան նման վոռնալ կամ հորդո-  
րել շներին, վորպես թե հարձակում են գոր-  
ծում։ Գալլերը սկզբում կանգնեցին և կարծես  
պատրաստվում ելին փախչելու, սակայն հակա-  
ռակը լեզավ. նրանք զգացին մեր անդեն լինելը  
և սկսեցին համառ քալլերով բարձրանալ մեր  
բարձրավանդակը... Մենք միաբերան գոռացինք  
ու սկսեցինք քարեր գլորել դեպի ցած, վորը  
ճանապարհին դիպչելով քարերին՝ մի շլաված  
գղրղլուն եր բարձրացնում, այդ գղրղլունը մի-  
անալով մեր արձակած ձայներին՝ ձորը լցնում  
եր գարհուրելի գոռում—գոշումով։ Այս անգամ  
մենք հաղթեցինք գիշատիչներին և սկսեցինք  
պատմել մեր հուշերը նման դեպքերի մասին...

Շատ շանցավ, սկսվեց արշալույսի՝ դանա-  
կի պես կտրող սառը քամին, վորից սկսեցինք  
ամենքս ել դողալ և կուչ գալով խմբվել. սակայն

այս ևս չողնեց, սկսեցինք մեկը մյուսի հետե-  
վից ալբել մեզ մոտ լեղած թերթերը, բայց լերբ  
վերջացավ թղթի վերջին կտորը, նորից սկսե-  
ցինք դողալ ու ավելի համախմբվել: Ասողերը  
կամաց-կամաց անհետանում ելին, այլևս հնա-  
բավոր չեր դիմադրել փշող սառը քամիներին.  
վեր կացանք և սկսեցինք կանգնած դորամասի  
նման քայլել:

Յերբ նկատելի դարձան քարակույտերի մի-  
ջից անցնելու լերիզանման կածանները, սկսե-  
ցինք կամաց-կամաց բարձրանալ հարավային դա-  
գաթի լանջը և դեռ չելինք հասել գագաթը, լերբ  
նորից մեզ վողջունեց արեգակն իր ջերմառատ  
կարմիր շողերով: Հենց այդ գեղեցիկ շողերի և  
հյուսիսային գագաթի լանջի ծալքավոր քարա-  
կույտերի դուրթիչ տեսարանում սկսեց լուսանը-  
կարել խմբի ղեկավար Դարբինյանը: Բարձրա-  
ցանք գագաթը, և մեր առջև նորից բացվեց  
Արարատյան դաշտի ընդարձակ տեսարանը, մի-  
այն այն տարբերությամբ, վոր այս անգամ մեր  
վրտների տակ փոխած եր կապույտ ու ծիծ-  
ղուն Սև լիճը և իր ափից քիչ վերև կանգնած  
տեխնիկայի վերջին խոսքերից մեկը՝ հանդիսա-  
ցող ողբերվութաբանական կայանը: Մենք  
կամաց-կամաց չինգիլ քարակույտերի վրայով  
իջանք Սև լիճը, վորտեղ դեռ քնից չելին արթ-  
նացել կայանի աշխատակիցները:

Յերկհարկանի շենքի դռները մեջ լերևաց  
ազակայանի ուռև աշխատակիցներից մեկը: Մենք  
մոտեցանք նրան, բարևեցինք և սկսեցինք հարց-  
նել մեզնից բաժանված և Արթիկի շրջանից  
լեկող խմբերի մասին: Նրա կողքին, դռների  
մեջ լերևաց մոտ 15 տարեկան դեռահաս մի ուռև  
սրիորդ, վորի կապույտ աչքերը նմանում էին  
լճակի վճիտ ջրերին, ուր գիշերները լողում էին  
անթիվ աստղերը: Նա իր հոր հետ ապրում էր  
այդտեղ: Նա հայտնեց, վոր մեկ որ առաջ այս-  
տեղից անցել են Արթիկի տուրիստները, իսկ մեր  
ընկերները գեռ չեյին լեկել... մի քանի  
խոսք փոխանակելուց հետո նա մեզ հրավիրեց  
ներս և կարգադրեց թեյի պատրաստութուն  
տեսնել: Յես իսկույն վերհիշեցի անցյալ տար-  
վա դեպքը, թե ինչպես այստեղ ապրողներն  
անընդհատ ուղիորդում էին Յերևան, վոր ի-  
րենց համար կենսամթերք տեղափոխեն. շնորհիվ  
կարմիր սավառնորդների ցույց տված հերոսական  
ուզնության, նրանք կարողացել էին հաղթահա-  
րել ամեն մի դժվարութուն:

Հանկարծ բաց դռներից լերևաց դեպի մեր  
կողմը լեկող լեզների, ավանակների ու ձիերի  
մի փոքրիկ քարավան, վորից մի քանի քայլ ա-  
ռաջ աշխուժ քայլերով գալիս էին Յերևանի և  
Մոսկվայի համալսարանի գոցենտները, վորոնք

եկել ելին սևուճաթիբերու արեգակնային լե-  
րեույթներն Արագածի վրա: Վեր կացանք, սկը-  
սեցինք ոգնել նրանց՝ այդ փոքրիկ քարավանով  
բերած բեռներն իջեցնելու և տեղավորելու:

Արևը կամաց-կամաց մոտենում եր միջո-  
րեականին, լերը մոտակա բարձունքներից լավեց  
մեր սւշացած ընկերների լերգի ձայնը. մենք իս-  
կույն վերկացանք և սկսեցինք դիմավորել նրանց  
ու պատմել մեր անցած դժվարին ճանապարհի ու  
դարհուրելի գիշերովա մասին ու հարց ու փորձ  
անել իրենց վնասեղ լինելու, տեսածների ու  
անցկացրած որվա մասին: Ամենքն ել մեծ վո-  
դևորությամբ ու պատկերավոր պատմում ելին  
իրենց անցկացրած տեղերի ու տեսածի մասին:  
Մակայն մենք հպարտ ելինք և ուրախ, վորով-  
հետև նվաճել ելինք ամենաբարձր գագաթը ու  
տեսել նրա բնական հարստութուններն ու ան-  
գնահատելի տեսարանները: Կեսորից հետո մեք  
ամբողջ խումբը լսեց ոգերևութաբանական կա-  
յանի վարիչի բացատրութուններն իրենց կատա-  
րած աշխատանքների ու փորձերի արդյունք-  
ների մասին, նրանք փորձել են լճի ափին ա-  
ճեցնել դաշտավայրի մի շարք բանջարեղեններ,  
սակայն դրական արդյունքի չեն հասել, վորով-  
հետև գիշերները ցուրտ ե լինում և հաճախ  
կարկուտ կամ ժամանակից շուտ ձյուն ե գա-  
լիս և փչացնում այդ բույսերը:

Յերեկոյան թելից ու ընթրիքից հետո պատ-  
րաստվում ելի հանգիստ քնելու, վորովհետե  
Յ-րդ գիշերն եր, վոր կանոնաւոր չելի  
հանգստացել: Հանկարծ բացվեց դուռը և ծղո-  
տե գլխարկները գլխներին, գաւազանները ձեռք-  
ներին, գոգոտալով ու լերգելով մտան Ապարանի  
հյուսիսային ամենաբարձր գագաթը բարձրացող  
Յ լավագույն տուրիստները, վորոնք գագաթում  
պետք և թողնելին Հանրապետական Սորհրդի  
գրոշը: Սկսվեց մի այնպիսի մերձեցման լերե-  
կո, վորը կարծես մի քանի տարի իրօր չաե-  
սած հարազատներ ելին իրօր հանդիպում: Այդ  
վոգեվորութեամբ աղջիկները աղաների ձալ-  
նակցութեամբ սկսեցին գեղգեղել ու գովել Ա-  
րագածի բնութիւնը, աղբւուրները, ձորերը,  
հնութիւններն ու հանդերը: Յերկար ժամանակ  
մերթ-ընդմերթ սենյակի մթութեան մեջ գաղ-  
տագողի սրախոսում ելին և սենյակը լցնում  
ընդհանուր ծիծաղով: Վերջապես սկսեցին մեկը  
մյուսի լետեից քնել, և սենյակում լսվում եր  
միայն քնածների մշմշուն շնչառութիւնը և դրը-  
սից ու դռան արանքից սուլող քամու ձայնը:

Արշալուսի կաթնագույն լույսը դեռ նոր եր  
լուսամուտներից ներս թափանցել, լերբ սենյակը  
լուսամուտից լուսավորվեց ամպերի փալատա-  
կումից և շատ չանցած, լսվեց նրա գարհուրելի

դղրդյունը, փորը մի քանի անգամ կրկնվելուց հետո սկսեց տեղալ կեռասի մեծության կարկուտ և թակել թիթեղած տանիքը, դուռը և լուսամուտները: Շատ չանցավ, ամբողջ մեր շրջապատը ծածկվեց մոտ 3 սմ. հաստատությամբ կարկուտի շերտով:

Ինչպես մյուս որերին, դեռ արևը չեր լերեվացել լերկնակամարում, լերը մենք սկսեցինք վեր կենալ, հավաքել մեր բոլոր իրեղենները, փոքրը խորհրդակցությունից հետո սկսեցինք իրաք ձեռք սեղմել, հաջողություն ցանկանալ միմյանց և բաժանվել իրարից: Վաղարշապատի խումբը բաժանվելով նրանցից՝ շարունակեց ճանապարհը դեպի Ամբերդի ձորը, իսկ կինո-նկարիչները նկարահանում ելին մեր բաժանումը:

Հասնում ենք հին ուրարտական ջրանցքների սիստեմին—12 առուններին (բանդերին), վորոնք մինչև այժմ ել ջուր են տալիս տարբեր գյուղերի: Մենք շարունակում ենք վայրեջքը:

Այն տեղերը, ուր անցյալում արածում ելին խաների, բեկերի ու իշխանների հոտերը, այժմ փռված են կոլխոզների անասնապահական Փերմաների բազմագույն ու անթիվ ժողխարների, խոշոր լեղջուրավոր անասունների և մատղաշների հոտերը:

Չորակի լերկու կողմի բարձրավանդակները

գորդարված ելին բազմագույն ու բազմապիսի  
ժողովկներով ու կանաչներով, վորից բուրոզ  
բուրմունքը լցնում եր այդ ընդարձակ տարածու-  
թյունը և արբեցնում այդտեղի պարվորներին:  
Վերջապես ձորակի ձախ ափից բարձրացող վո-  
լորապտուկտ նեղ արահետով բարձրացանք բարձ-  
րավանդակի գագաթը, ուր մեր առաջ ցցվեցին  
Մմբերդի գորշ պարիսպները, վորոնք կեսոր-  
վա արևի ճառագայթներից հուրհրատում ելին  
ինչպես հացագործի թոնրից բարձրացող հուր-  
հրանքը: Մենք կամաց-կամաց մոտեցանք այդ  
գարավոր հրեշին և լերբ անցանք կամարածածկ  
դռներից, մեր առջև բացվեց բերդի ամբողջ  
տեսարանը:

Բերդը պատսպարված եր Մմբերդի և Ար-  
խաշենի ձորերի միացման բաշին, վորի արևել-  
յան կողմով կտրում անցնում եր Արխաշենի ան-  
անցնելի ձորն իր քչքչան սառը ջրով:

Առաջին իսկ հալացքից չուրաքանչյուր հե-  
տաքրքրվող կարող եր տեսնել այդ բերդում ապ-  
րած իշխանների պալատը, բաղնիքը, դեպի ձո-  
քը տանող ստորերկրյա ճանապարհը, վանքը և  
մեկ—լերկու մետր հաստությամբ հսկա քարերից  
շարված ամրոցի պատերի հետքերը, վորոնց  
շուրջը կան բազմաթիվ գերեզմաններ: Ու մենք  
լերկար ժամանակ պարսպի կատարին, կանգ-

Կամ խորատուզված՝ վերհիշում ելինք այդ բու-  
րբը և ուսումնասիրում թե ինչ պայմաններում են  
տուրել ու մեզ սնել մեր նախնիներն ու հայրերը:  
Արևը կամաց-կամաց գլորվում եր դեպի արև-  
մուտք: Հեռվում Արխաշենի աջ ափին լերևում  
ելին մենատնտես սարվորների հատ ու կենսա-  
վրանները, վորոնց մոտ կանգնած ելին մի քանի  
անասուններ. իսկ բերդից դեպի հարավ, ձորի  
աջ ափի կանաչազարդ բարձրավանդակը ծիւում  
եր մեծ ու սպիտակ վրաններով, վորոնց տակ  
ապրում ելին խորհանտեսութւան և կոլխոզների  
հովիվներն ու սարվորները: Դեպի Արխաշե-  
նաձորը տանող կամարածածկ դռների միջով  
կամաց-կամաց վոլորուն ճանապարհով իջանք  
ձորի հովիտը, հետո նեղ և վոլորապտուլտ ճանա-  
պարհներով բարձրացանք ձորի ձախ ափը և խորա-  
տուզված Ամբերդի անցյալի հուշերի մեջ՝ կա-  
մաց-կամաց մոտեցանք Արագածի անտառներին,  
վորոնց հանգստացուցիչ ստվերների տակ սկսե-  
ցինք լերգել, թռչկոտել և կատակներ անել:

Արևը մոտեցել եր արևմուտքին, և նրա այրող  
շողերն անզոր ելին դարձել, լերը մենք մտանք  
Խնաքլու գլուղը, ուր առաջին անգամ մեզ դի-  
մավորեցին կալում աշխատող ժրաջան ու հար-  
վածալին կոլխոզնիկները:

Արևն արդեն մայր եր մտել, լերք մենք

մտեցանք Բյուրական գլուղին: Արտոից ասւն  
կլին վերադառնում անասունների հոտերը: Մենք  
հաղաթանակող զինվորի նման հպարտ ու համաս-  
քալլերով գլուղ մտանք և մեր քալլերն ուղ-  
ղեցինք դեպի դպրոցը: Իեռ նոր կլինք  
մտել դպրոցի ծառագարդ բակը, լերբ մեզ շըր-  
ջապատեցին Չելլուակիւնցիների անվան պիտներ  
լազերականները և սկսեցին հարցնել «Արտ-  
դած գնացող տուրիստները դ՞նք եք»:

Վրանի գոռների մեջ լերեվաց լերիտասարդ  
գեկավարը: Մենք խկուչն մտեցանք իրար և  
միմյանց ձեռք սեղմելով ծանոթացանք: Նա մեծ  
սիրով ընդառաջեց մեզ՝ սենյակ ու լուսավորու-  
թյուն տալով. նա հյուրասիրեց մեզ լազերա-  
կանների ընթրիքով:

Ուշ գիշեր եր, լերբ դուրս լեկա պատըշ-  
դամբը՝ լուսնի նուրբ շողերով լուսավորված հե-  
ռուները դիտելու: Յես սկսեցի վերհիշել Բյու-  
րականի աշխատավորութւան սև անցյալը:

Այն վանքը, վորը մի ժամանակ կեղեքիչ-  
ների ու ստրկացնողների աղոթատուն եր հան-  
գիսանում, այժմ նրա ճակատին փայլում և  
հնութւան կոմիտեյի գուլքագրման ցուցանակը:  
Այն անտառազատ ամառանոցը, ուր ճեմում էլին  
եջմիածնի վանքի կաթողիկոսը և վանականները,  
սևադլուխ թալանչիներն ու գոպիողները, վո-

բոնք այդ պարտեզի ստվերներին տակ վայելում  
ելին վանքապատկան գլուղերի աշխատավոր-  
ների արյուն-քրտինքի վաստակը, և լերեքմե  
չքեր կանանց ներս հրավիրում վորպես ուխտա-  
տեղի լեկող ուխտավորի...

Այժմ այդ անտառապատ շենքում բոլոր-  
վին փոխվել է կյանքը. տարին բոլոր նոր սե-  
բունդն է կրթվում ու դաստիարակվում, իսկ ա-  
մառային շոգերին Արարատյան դաշտի կոլխոզ-  
նիկներին առույգ զավակներն են ճեմում ու  
պատրաստվում նոր կյանքով պահելու բոլոր նը-  
րանց, վորոնք տարիներ շարունակ զրկված են  
լեղել, և այդ նոր կյանքը տարածել ամբողջ աշ-  
խարհում:

Լավում է Չելլուսիկինցիների անվան լու-  
գերականների նախաճաշի ազդանշանը: Ամեն  
կողմից շարքով մարզպնքից վերադարձան պիտ-  
ներները և շարվեցին մեծ չինարի ծառի տակ  
զրկած սեղանների շուրջը և սկսեցին նախաճա-  
շել, և այդ ժամանակ նվագում էր փողային  
նվագախումբը:

Յերբ նախաճաշը վերջացրինք, հնչեց հա-  
վաքի փողը. բոլոր ողակները շարքերով մտան  
դարդարված ու կահավորված լենինյան անկյու-  
նը, ուր լեա և Ալյոշան ծանոթացրինք նրանց

մեր մարշրուտի նախառակներին և նվաճումներին ու յուրաքանչյուր տուրիստի և պիոներների անելիքներին: Յերբ մենք վերջացրինք՝ պիոներները միաբերան գոչեցին. «Միշտ պատրաստ ենք պատվով կատարելու մեր վրա դրված բոլոր հանձնարարությունները»: Լավեցին նվազախմբի պիոներների ու տուրիստների լեզերը և արտասանությունները: Հետո վերցրինք մեր պայուսակները, շնորհակալություն և հաջողություն հայտնելով միմյանց՝ բուռն վողկութեամբ հեռացանք: Դեռ լերկար ժամանակ իմ ականջին հնչում ելին հայ և թուրք պիոներների դուետների քաղցր ղողանջները:

Մենք գնացինք կոլխոզը, ծանոթացանք աշխատանքներին, տեսանք հացահատիկի բերքի մի մասը, ծխախոտի թաց և չոր պարկերի հըսկա դարսերը, անասունների նոր գոմերն ու դլուդից դուրս հանդիպեցինք ծխախոտի և առվույտի անձայր դաշտերին, վորտեղ քրտնաթոր աշխատում ելին ժրաշան կոլխոզնիկները:

Արեգակը կամաց-կամաց մոտենում եր միջորեականին ավելի ու ավելի կիզիչ դարձնում իր ջերմառատ շողերը: Մեր խումբը մտավ նախկին բեկական Ագարակ գյուղը: Կեսորվա այրող շոգից փողոցները գրեթե դատարկվել ելին. միայն առվույտ բարձած սալլի տակ հեվալով քը-

հում եր լեռնականների գամփուր, վորը մեր վոտ-  
նասձայնին թողեթոլ բարձրացրեց գլուխը, հա-  
ղիվ լսելի ձայնով մի քանի անգամ հաջեց և  
շարունակեց իր քունը: Մենք առանց ժամանակ  
կորցնելու՝ շարունակեցինք մեր ճանապարհը:

Արեգակն արդեն անցել եր Արարատի գա-  
գաթից դեպի արևմուտք, և նրա կիզիչ ճառագայթներն սկսել էին մեղմանալ, լերք մեր  
խումբը մտավ Ղզլթամուր գլուղը, վորն առաջնե-  
րում կոչվում եր Ախթամուր, իսկ այժմ նոր կոչու-  
մով՝ Վոսկեվագ: Մենք տեսանք գլուղի լեկեղեց-  
ին վորը կառուցվել է 7-րդ դարում և բազմաթիվ  
վերանորոգումներով պահպանվել է մինչև այսօր:  
Այդ դարավոր պատերի վրա լերեում էին 7-րդ  
դարի ճարտարապետության և կուլտուրայի հետ-  
քերը, վորոնք խոշոր նշանակութուն ունեն մեր  
կուլտուրայի պատմության համար:

Այնուհետև մենք անցանք Ախթամուրի փոք-  
րիկ լեկեղեցին ու շատ հին բերդը, վորը գտնվում  
եր գլուղից դուրս Քասախի ափին, բլրակի վրա:  
Ճանապարհին մենք հանդիպեցինք կոլխոզի և  
«Արարատ» — ի բաժանմունքի արհեստանոցնե-  
րին, վորտեղ բանվորները լեռանգուն կերպով  
վերանորոգում էին տակաոներն ու պատրաստ-  
վում քաղցր խաղողի առատ բերքահավաքին...  
Փոքրիկ լեկեղեցին գտնվում է մոտ լերեք կի-

լումեաք գլուղից հետու, կառուցված է լեղել  
13-րդ դարում: Շնորհիվ իր շուրջը կառարվող  
կռիվների և ազգաբնակչութւան անփուլթ վե-  
րաբերմունքի, բոլորովին քարուքանդ է լեղել,  
միայն մնում են նրա հիմքից մի մետք բարձր  
պատերը: Բերդը կառուցված է լեղել Ուրար-  
տացիների ժամանակ. նրա շուրջը դեռ լեռե-  
վում են հին գլուղի հեաքերը, իսկ բերդից դեպի  
արևմուտք Փրանգանոցի, Այարլուլի և Փաթրին-  
չի միջև գտնվող բլրակների վրա կարելի է  
գտնել նախաստամական շրջանից մնացած բազմա-  
թիվ գերեզմաններ, մեզալիթյան հուշարձաններ:

Այդտեղից՝ հաղթանակից վերադարձող մար-  
տիկների պես հպարտ ու լերգելով շարունակե-  
ցինք մեր ճանապարհը: Արևը կամաց-կամաց  
կողբա սրածայր սարն անցնելով հավաքում էր  
իր շողերը և պատրաստվում թագնվելու: Մենք  
մտանք նախկին խանական Հաջիդարա գլուղը,  
փորն այժմ կոչվում է Այգեշատ, ուր մեզ  
գիմավորեցին դասատուները և աշակերտութու-  
նը: Մի փոքր հարց ու փորձից հետո Այգեշա-  
տի կարմիր և քաղցր խաղողի այգիների միջով,  
արևից կարմրատակած խաղողի համր տեսնելով,  
առաջ անցանք և Շահումյան գլուղի վրայով  
շարունակեցինք մեր ճանապարհը:

Մենք կամաց-կամաց մոտենում էինք Վաղ-

պատին: Վորքան մոտենում ելինք, այնքան ավելի ու ավելի նկատելի լեր գառնում լերեկության խավարի մեջ խորասուզված քաղաքը, վորքանի գնում՝ այնքան ընդարձակվում եր: Կապույտ ու ընդարձակ լերկնակամարում լողում ելին անթիվ աստղեր, իսկ լերիտասարդ լուսինը պատռելով ամպերի նուրբ ծալքերը, աստղերի հետ լուսավորում եր մեր ճանապարհը. բայց լերք մոտեցանք քաղաքին, այդ լերկնային լույսը կորցրեց իր զորութլուհը քաղաքի փողոցներում, ոններում և բարձր տանիքների վրա վառվող, Յերևանի հիդրոկայանի ուժով փայլատափող լույսերի ու լուսարձակների առաջ... Վերջապես հպարտ ու լերգելով՝ մեր խումբը կանգնեց քաղաքի լեզրին, իր նպատակին հասած. միմյանց ձեռք սեղմելով՝ սկսեցինք բաժանվել իրարից, հողնածուխան փոխարեն մեզ հետ բերելով Արագածի ամենաբարձր գագաթի նվաճման, նրա գեղեցիկ ու բազմապիսի տեսարանների, հնութլուհների, հանքային ու բուսական հարստութլուհների տպավորութլուհներն ու հավաքածուները:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Պրոլետ-տուրիզմի Հանրապետական Սորհրդի  
առաջադրանքը 3
2. Քաղվածք ՀԽՍՀ Կենտրոնականի նախագահու-  
թյան նիստի № 26/27 արձանագրությունից 5
3. Քաղվածք Կուլտուրայի Պաշտպանության Ինս-  
տիտուտի եքսպեդիցիոն կոմիտեյի արձանա-  
գրությունից 7
4. Քաղվածք 1934 թ. սեպտեմբերի 6-ին կայա-  
ցած Պրոլետ-տուրիզմի Հանրապետական  
Սորհրդի նախագահության արձանագրու-  
թյունից 8
5. Վարդան Արիստակեսյան — Արագածի աստ-  
ղածե տուրիստական արշավը և լեռնային  
տուրիզմի զարգացման հետազոտ խնդիրները 9
6. Չ. Կորկոտյան — Արագածի աստղածե արշավի  
արդյունքները 17
7. Վ. Դարյան — դեպի Արագածի գագաթը 32
8. Գուրգեն Սարյան — դեպի Արագածի հյուսի-  
սային գագաթը 40
9. Բուդաղյան. — տպավորություններ Արագածի  
աստղածե արշավից 67

LIBRARY OF THE  
MUSEUM OF NATURAL HISTORY  
NEW YORK

ԳԻՆԸ 1 ՈՐՈՒՄԸ

7668



ЗВЕЗДНЫЙ ПОХОД НА АРАГАЦ  
ГИЗ ССР Армения, Эриван 1986 г.